«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 1

«26» օգոստոսի 2022թ. ք. Գորիս

**Նիստին ներկա էին «Տարրական դասարանների մեթոդմիավորման» բոլոր անդամները.**

1. Շալունց Ռիտա (ՄՄ նախագահ)
2. Դոլունց Արուս
3. Գալստյան Նունե
4. Աղաբեկյան Անուշ
5. Մալխասյան Կարինե
6. Ավագյան Գայանե
7. Գրիգորյան Վարդ
8. Միքայելյան Ալինա
9. Փարսադանյան Տաթևիկ
10. Աղաբեկյան Անահիտ
11. Հարությունյան Արմինե
12. Ջավահիրյան Իրինա
13. Պողոսյա Կարինե
14. Աբգարյան Աննա
15. Հովհաննիսյան Թամարա
16. Միրզոյան Սոնա
17. Հայրապետյան Ալեքսանդր

**Նիստին ներկա էր ուսումնական գծով փոխտնօրեն Ս. Ավանեսյանը:**

## Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
2. «Տարրական դասարանների մեթոդմիավորման» 2022-2023 ուսումնական տարվա ժամաբաժանման հաստատում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց )
3. Թեմատիկ գրավոր աշխատանքների քանակի քննարկում և հաստատում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց )
4. Տարրական դասարանների մեթոդմիավորման նախագահի 2022-2023 ուսումնական տարվա աշխատանքային պլանի, առարկայական ծրագրերի, ուսումնական պլանի, թեմատիկ պլանների, օրացուցային-թեմատիկ պլանների, առարկայական խմբակների ծրագրերի և օրացուցային-թեմատիկ պլանների հաստատում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց )
5. Օրվա դասի պլանների (այսուհետ՝ ՕԴՊ) էլեկտրոնային տարբերակի ներդնում:
(զեկուցող Ս. Ավանեսյան)

***Լսեցին 1.*** «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

***Արտահայտվեցին՝***

***Որոշեցին՝*** Հաստատել 2022-2023 ուսումնական տարվա Տարրական դասարանների մեթոդմիավորման 1-ին նիստի օրակարգը:

***Լսեցին 2.*** «Տարրական դասարանների մեթոդմիավորման» 2022-2023 ուսումնական տարվա ժամաբաժանման հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց )

Զեկուցողը նշեց, որ նախնական դասաբաշխման մեջ կատարվել է փոփոխություն, «Շախմատ» առարկայի բոլոր դասաժամերմ այսուհետ Ալեքսանդր Հայրապետյանն է դասավանդելու, իսկ Կարինե Արզումանյանը ՄՄ կազմից դուրս է գալիս՝ բարձր դասարաններում «Տեխնոլոգիա» առարկան դասավանդելու պատճառով: Հիմք ընդունելով նախնական ժամաբաժանումը զեկուցողն առաջարկեց կատարել համապատասխան փոփոխությունները, ինչպես նաև առաջարկեց հաստատել դպրոցական բաղադրիչը:

II դասարաններում՝ Մաթեմատիկա՝ 1 ժամ բաղադրիչից:

III դասարաններում՝ Մայրենի՝ 1 ժամ բաղադրիչից,
Մաթեմատիկա՝ 1 ժամ բաղադրիչից:

IV դասարաններում՝ Մայրենի՝ 1 ժամ բաղադրիչից,
Մաթեմատիկա՝ 1 ժամ բաղադրիչից:

***Արտահայտվեցին՝*** Կ. Մալխասյանը, Ս. Ավանեսյանը, Վ. Գրիգորյանը:

Արտահայտվողները կարևոր համարեցին դպրոցական բաղադրիչի տրամադրումը, նշեցին, որ դրանց տրամադրումը «Մաթեմատիկա», «Մայրենի» առարկաներին հնարավորություն է տալիս ավելի խորն ուսումնասիրել առարկայական ծրագրով նախատեսված որոշ թեմաներ:

***Որոշեցին՝*** Հաստատել 2022-2023 ուսումնական տարվա Տարրական դասարանների մեթոդմիավորման ժամաբաժանումը (կցվում է):

***Լսեցին 3.*** Թեմատիկ գրավոր աշխատանքների քանակի քննարկման և հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց )

Զեկուցողը նշեց, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2021-2022 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակից սկսած կիսամյակային գրավոր աշխատանքներ այլևս նախատեսված չեն, որոշ առարկաների դեպքում անհրաժեշտություն է առաջացել այդ առարկաների դեպքում ավելացնել թեմատիկ գրավոր աշխատանքների թիվը:

***Արտահայտվեցին՝*** Գ. Ավագյանը, Կ. Պողոսյանը, Ի. Ջավահիրյանը, Կ Պողոսյանը:

Արտահայտվողներն առաջարկեցին կիսամյակային ամփոփիչ գրավոր աշխատանքները փոխարինել ևս մեկ թեմատիկ գրավոր աշխատանքով:

2-րդ դասարանի դասվար Գայանե Ավագյանն առաջարկեց 2-րդ դասարանի 1-ին կիսամյակում «Մայրենի», «Մաթեմատիկա» առարկաներից թեմատիկ գրավորների քանակը դարձնել 4-ական, որպեսզի աշակերտներն ավելի հեշտ հարմարվեն թեմատիկ գրավոր աշխատանքներ գրելու գործընթացին, ինչպես նաև հնարավոր լինի պատշաճ ստուգել նրանց ընթացիկ գիտելիքները:

3-րդ դասարանի դասվար Իրինա Ջավահիրյանը 3-րդ դասարանների բոլոր դասվարների անունից առաջարկեց «Մայրենի», «Մաթեմատիկա» առարկաներից 5-ական թեմատիկ գրավոր աշխատանքներ:

4-րդ դասարանի դասվար Կարինե Պողոսյանը իր ելույթի ժամանակ նշեց, որ շատ կարևոր է ամեն թեմայի ամփոփման ժամանակ գիտելիքները ստուգող գրավոր աշխատանք տալը, որը պարզ է դարձնում, թե աշակերտները ինչպես են յուրացրել թեման:

***Որոշեցին՝*** Հաստատել «Մայրենի», «Մաթեմատիկա» առարկաներից թեմատիկ գրավոր աշխատանքների հետևյալ քանակությունը.

II դասարաններում՝ I կիսամյակում. Մայրենի՝ 4, Մաթեմատիկա՝ 4
II կիսամյակում. Մայրենի՝ 5, Մաթեմատիկա՝ 5

III դասարաններում՝ I կիսամյակում. Մայրենի՝ 5, Մաթեմատիկա՝ 5
II կիսամյակում. Մայրենի՝ 5, Մաթեմատիկա՝ 5

IV դասարաններում՝ I կիսամյակում. Մայրենի՝ 5, Մաթեմատիկա՝ 5

*Լսեցին 4.* Տարրական դասարանների մեթոդմիավորման նախագահի 2022-2023 ուսումնական տարվա աշխատանքային պլանի, առարկայական ծրագրերի, ուսումնական պլանի, թեմատիկ պլանների, օրացուցային-թեմատիկ պլանների, առարկայական խմբակների ծրագրերի և օրացուցային-թեմատիկ պլանների հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց )

Զեկուցողը ներկայացրեց Տարրական դասարանների մեթոդմիավորման նախագահի 2022-2023 ուսումնական տարվա աշխատանքային պլանը, դրանով նախատեսված հիմնական աշխատանքները: Զեկուցողը նշեց, որ թեմատիկ պլանները, օրացուցային-թեմատիկ պլանները կազմվել են առարկայական չափորոշիչներին, ծրագրերին համապատասխան: Արտադասարանական խմբակների ծրագրերը, օրացուցային-թեմատիկ պլանները կազմվել են ուսուցիչների կողմից, հիմք ընդունելով խմբակների կազմակերպման մասին համապատասխան կարգը:

*Արտահայտվեցին՝* Ս. Ավանեսյանը, Տ. Փարսադանյանը, Կ. Մալխասյանը:

Սերգեյ Ավանեսյանը ներկայացրեց բոլոր պահանջները, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել թեմատիկ պլանները, օրացուցային-թեմատիկ պլանները կազմելու ժամանակ: Վերջինս նշեց, որ օրացուցային-թեմատիկ պլաններում օրերն անհրաժեշտ է գրել միայն առաջին կիսամյակի համար, նշումները կատարել մատիտով՝ հետագա փոփոխությունների անհրաժեշտության դեպքում շտկումներ կատարելու նպատակով: Ս. Ավանեսյանը նշեց, որ խմբակների ծրագրերը չպետք է կրկնեն դպրոցական դասընթացի ծրագիրը և որ անհրաժեշտ է ընտրել ավելի արդիական և ավելի գործնական թեմաներ՝ աշակերտների համար ավելի հետաքրքիր ու ավելի կիրառական դարձնելով խմբակները:

Կարինե Մալխասյանը հիշեցրեց, որ թեմատիկ պլանները, ինչպես նաև ՕԹՊ-ները կարող են կազմվել առաջնորդվելով առարկայական ծրագրերով և հիմք ընդունելով դպրոցում կիրառվող դասագրքերը:

*Որոշեցին՝* Հաստատել Տարրական դասարանների մեթոդմիավորման նախագահի 2022-2023 ուսումնական տարվա աշխատանքային պլանը, առարկայական ծրագրերը, ուսումնական պլանը, թեմատիկ պլանները, օրացուցային-թեմատիկ պլանները, արտադասարանական խմբակների ծրագրերը և օրացուցային-թեմատիկ պլանները:

*Լսեցին 5.* Օրվա դասի պլանների (այսուհետ՝ ՕԴՊ) էլեկտրոնային տարբերակի ներդրման մասին հարցը:

(զեկուցող Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ 2021-2022 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ընթացքում իր կողմից հայտարարվել է, որ 2022-2023 ուսումնական տարվանից դպրոցում պարտադիր են լինելու ՕԴՊ-ների էլեկտրոնային տարբերակները, ինչպես նաև նրա կողմից ներկայացվել է համապատասխան ձևանմուշը:

Զեկուցողը նշել է, որ հաստատման և կամ ներդրման դեպքում ՕԴՊ-ները պարտադիր են լինելու բոլոր ուսուցիչների համար, անկախ նրանց աշխատանքային գործունեության տևողությունից:

*Արտահայտվեցին՝* Ի. Ջավահիրյանը, Ա. Աբգարյանը

Արտահայտվողները ողջունեցին զեկուցողի առաջարկը, նշեցին, որ ներկայացված ՕԴՊ-ի տարբերակը հարմար է և ուսուցչի համար լրացուցիչ ծանրաբեռնվածություն չի ստեղծի, հատկապես այն դեպքում, երբ ՕԴՊ-ները կլրացվեն էլեկտրոնային տարբերակով, այդ տարբերակով նույնպես

կարխիվացվեն և հետագայում կիրառության ժամանակ և դրանում փոփոխություններ կատարելու դեպքում դժվարություններ չեն լինի:

***Որոշեցին՝*** 2022-2023 ուսումնական տարվանից ներդնել օրվա դասի պլանները (այսուհետ՝ ՕԴՊ), դրանք լրացնել բացառապես էլեկտրոնային տարբերակով: 2022-2023 ուսումնական տարվանից սկսած ՕԴՊ-ները պարտադիր են բոլոր ուսուցիչների համար, անկախ նրանց աշխատանքային գործունեության տևողությունից:

Մ/Մ նախագահ՝ _____ Ռ. Շալունց

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ _____ Ս. Ավանեսյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

«19» սեպտեմբերի 2022թ. ք. Գորիս

**Նիստին ներկա էին «Տարրական դասարանների մեթոդմիավորման» բոլոր անդամները:**

**Նիստին ներկա էր ուսումնական գծով փոխտնօրեն Ս. Ավանեսյանը:**

**Օ Ր Ա Կ Ա Ր Գ**

1. «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
2. Հաղորդում Տարրական դասարանների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
3. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
4. Լրացուցիչ արձակուրդի և ՕԹՊ-ներում անհրաժեշտ փոփոխությունների կատարում:
(զեկուցող՝ փոխտնօրեն Ս. Ավանեսյան )

***Լսեցին 1.*** «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

***Արտահայտվեցին՝***

***Որոշեցին՝*** Հաստատել 2022-2023 ուսումնական տարվա Տարրական դասարանների մեթոդմիավորման 2-րդ նիստի օրակարգը:

***Լսեցին 2.*** Հաղորդում՝ Տարրական դասարանների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
Զեկուցողը ներկայացրեց Տարրական դասարանների մեթոդմիավորման նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց, որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ, սահմանված ժամկետներում:

***Արտահայտվեցին՝***

***Որոշեցին՝*** Ընդունել ի գիտություն Տարրական դասարանների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

***Լսեցին 3.*** Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
Զեկուցողը ներկայացրեց մատենավարության հետ կապված թերությունները, առաջարկեց ժամանակին կատարել գրանցումները՝ հետագա խնդիրներից խուսափելու համար:

***Արտահայտվեցին՝*** Ս. Ավանեսյանը:
Ավանեսյանը նշեց, որ արդեն իսկ արձանագրվել են մատենավորության հետ կապված խնդիրներ, մասնավորապես, էլեկտրոնային մատյանների ուշ լրացում (ժամկետից խախտում), լրացված թեմաների անհամապատասխանություն ՕԹՊ-ներին, որոշ աշակերտների մոտ

գնահատականների բացակայություն: Հորդորեց լինել ավելի ուշադիր և սահմանված աշխատանքները կատարել ժամանակին ու պատշաճ:

***Որոշեցին՝*** Մեթոդմիավորման նախագահի կողմից իրականացնել էլեկտրոնային մատյանների ամենշաբաթյա ստուգումներ, դրանց արդյունքներով ի հայտ եկած խնդիրները ներկայացնել ուսումնական գծով փոխտնօրեն Ս. Ավանեսյանին:

***Լսեցին 4.*** Լրացուցիչ արձակուրդի և ՕԹՊ-ներում անհրաժեշտ փոփոխությունների կատարման մասին:

(զեկուցող՝ փոխտնօրեն Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ 2022թ-ի սեպտեմբերի 13-ի դեպքերի հետ կապված ԿԳՍՄ նախարարությունը Սյունիքի, Վայոց ձորի և Գեղարքունիքի մարզերում լրացուցիչ արձակուրդ է տրամադրվել և անվտանգության նկատառումներից ելնելով սեպտեմբերի 13-ից մինչև սեպտեմբերի 16-ը դասապրոցեսը կազմակերպվել է հեռավար եղանակով: Նաև նշեց, որ տնօրենի հրամանով առաջիկայում լրացուցիչ արձակուրդի օրերի հետ կապված որոշում կկայացվի և հավանաբար լրացուցիչ արձակուրդի 4 օրերը կլրացվեն առաջիկա ժամանակահատվածում վեցօրյա ռեժիմով:

***Արտահայտվեցին՝*** Ռ. Շալունցը:

Արտահայտվողը նշեց, որ լրացուցիչ արձակուրդների հետ կապված համապատասխան փոփոխություններ պետք է կատարել ՕԹՊ-ներում, ուշադրություն դարձնել էլեկտրոնային մատյաններում կատարվելիք լրացումներին:

***Որոշեցին՝*** Հիմք ընդունել տնօրենի հրամանը և դրա համաձայն ՕԹՊ-ներում կատարել համապատասխան փոփոխությունները:

Մ/Մ նախագահ՝ _____ Ռ. Շալունց

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ _____ Ս. Ավանեսյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

«11» հոկտեմբերի 2022թ. ք. Գորիս

**Նիստին ներկա էին «Տարրական դասարանների մեթոդմիավորման» բոլոր անդամները, բացառությամբ՝ Ալեքսանդր Հայրապետյանի :**

**Նիստին ներկա էր ուսումնական գծով փոխտնօրեն Ս. Ավանեսյանը:**

ՕՐԱԿԱՐԳ

1. «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
2. Հաղորդում Տարրական դասարանների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
3. I դասարաններում՝ «Ա»-ի ուսուցման դասերի կազմակերպում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
4. Սկսնակ ուսուցիչների կարիքների վերհանում և փորձառու ուսուցիչների խորհրդատվության կազմակերպում այդ կարիքները բավարարելու ուղղությամբ:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
5. Սեպտեմբեր ամսա օրվա դասի պլանների (այսուհետ՝ ՕԴՊ) էլեկտրոնային տարբերակի ընդունում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
6. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
7. Աշնանային արձակուրդի ժամանակացույցի քննարկում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
8. Ցուցադրական դասերի, դաս-միջոցառումների կազմակերպում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

***Լսեցին 1.*** «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

***Արտահայտվեցին՝***

***Որոշեցին՝*** Հաստատել 2022-2023 ուսումնական տարվա Տարրական դասարանների մեթոդմիավորման 3-րդ նիստի օրակարգը:

***Լսեցին 2.*** Հաղորդում՝ Տարրական դասարանների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
Զեկուցողը ներկայացրեց Տարրական դասարանների մեթոդմիավորման նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց, որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ, սահմանված ժամկետներում:

***Արտահայտվեցին՝***

***Որոշեցին՝*** Ընդունել ի գիտություն Տարրական դասարանների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

*Լսեցին 3.* Ի դասարաններում՝ «Ա»-ի ուսուցման դասերի կազմակերպման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը նշեց, որ Ի դասարաններում՝ «Ա» տառ-հնչյունի ուսուցման դասերի կազմակերպումը, այբբենական շրջանի մուտքը անհրաժեշտ է կազմակերպել տպավորիչ՝ աշակերտների մոտ ձևավորելով հետաքրքրության զգացում դեպի տառուսուցման շրջանը:

*Արտահայտվեցին՝* Ն. Գալստյանը, Ա. Աղաբեկյանը, Կ. Մալխասյանը:

Գալստյանն իր ելույթում ասաց, որ նախատեսել է մի փոքրիկ դաս-միջոցառում, որում ներառել է երգ, պար, արտասանություններ: Աղաբեկյանն ու Մալխասյանը իրենց ելույթում նշեցին, որ ավելի հակված են բաց-դասի գաղափարին և Ա-ի ուսուցումը կկազմակերպեն այդ եղանակով:

*Որոշեցին՝* Առաջին դասարանների «Ա» տառ-հնչյունի ուսուցման դասերը կազմակերպել աշնանային արձակուրդից առաջ. Ia դասարանը՝ 14.10.2022թ., Iբ և Iգ դասարանները՝ 15.10.2022թ-ին:

*Լսեցին 4.* Սկսնակ ուսուցիչների կարիքների վերհանման և փորձառու ուսուցիչների խորհրդատվության կազմակերպման, այդ կարիքները բավարարելու ուղղությամբ հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը սկսնակ ուսուցիչների կարիքների վերհանման և փորձառու ուսուցիչների խորհրդատվության կազմակերպման վերաբերյալ ելույթում նշեց, որ սկսնակ ուսուցիչների կարիքները ճշգրիտ հասկանալու համար անհրաժեշտ է կատարել դասալսումներ, կլոր սեղանի շուրջ քննարկումներ և անհրաժեշտ խորհրդատվությունների և օրինակների օգնությամբ լրացնել փորձի պակասը:

*Արտահայտվեցին՝* Գ. Ավագյանը:

Գ. Ավագյանը հորդորեց օրվա ընթացքում ազատ ժամերը տրամադրել դասալսումների կազմակերպմանը՝ զուգահեռ դասարաններում և փորձառու ուսուիչների մոտ:

*Որոշեցին՝* Սկսնակ ուսուցիչները կշարունակեն կատարել դասալսումներ՝ ընդունելով խորհուրդները և առաջարկները: Իսկ փորձառու ուսուցիչներն էլ կկազմակերպեն ցուցադրական դասեր, բաց-դասեր , որպեսզի օգտակար լինեն սկսնակ ուսուցիչներին:

*Լսեցին 5.* Սեպտեմբեր ամսա օրվա դասի պլանների (այսուհետ՝ ՕԴՊ) էլեկտրոնային տարբերակի ընդունման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ ուսուցիչների կողմից ներկայացրած աշխատանքները ընդունել և ստուգել է: Սեպտեմբեր ամսվա համար ՕԴՊ-ներ էին ներկայացրել Ալինա Միքայլեյանը, Իրինա Ջավահիրյանը: Ավելի վաղ տեղի ունեցած խորհրդակցության և քննարկման արդյունքում որոշում էր կայացվել այս տարի 1-ին դասարանում դասավանդող դասվարներից չպահանջել ՕԴՊ-ները, հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2023-2024 ուսումնական տարվանից ուսուցումը կիրականացվի նոր չափորոշիչներով: 4-րդ դասարանների դասվարներից որևէ մեկը ՕԴՊ չի ներկայացրել: ՕԴՊ-ներ չեն ներկայացրել նաև մեթոդմիավորման անդամներ Աննա Աբգարյանը, Թամարա Հովհաննիսյանը, Սոնա Միրզոյանը, Ալեքսանդր Հայրապետյանը:

Ավանեսյանը նշեց, որ Ալինա Միքայլեյանի ու Իրինա Ջավահիրյանի կողմից ներկայացված ՕԴՊ-ների ստուգման արդյունքում որոշակի թերություններ են արձանագրվել, որոնց վերաբերյալ ևս մեկ անգամ պարզաբանումներ են կատարվել և առաջարկվել է կատարել շտկումները:

Ավանեսյանը հատուկ շնորհակալություն հայտնեց դասվար Ջավահիրյանին՝ լավ աշխատանքի համար:

*Արտահայտվեցին՝* Վ. Գրիգորյանը:

Գրիգորյանը նշեց, որ քանի որ բոլոր ուսուցիչներն աշխատում են նույն թեմատիկ պլաններով և նույն թեմատիկ հաջորդականությամբ, ՕԴՊ-ների այս տարբերակները հարմար են բոլոր զուգահեռ դասարաններում դասավանդող ուսուցիչների համար և ուսուցիչների կողմից արդեն իսկ մշակված ու հավանության արժանացած ՕԴՊ-ները կիրառվում են նաև զուգահեռ դասարանների մյուս ուսուցիչների կողմից:

*Որոշեցին՝* 2-4-րդ դասարաններում դասավանդվող բոլոր առարկաների համար ՕԴՊ-ները ներկայացնել ուսումնական մաս յուրաքանչյուր ամսվա ավարտին:

*Լսեցին 6.* Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

*Արտահայտվեցին՝* Զեկուցողը ներկայացրեց մատենավարության հետ կապված նախորդ ուսումնական տարվա թերությունները, առաջարկեց ժամանակին կատարել գրանցումները՝ հետագա խնդիրներից խուսափելու համար:

*Որոշեցին՝* Ս.Ավանեսյանը:

Ավանեսյանը նշեց, որ արդեն իսկ որոշ ուսուցիչների մոտ արձանագրվել են մատենավորության հետ կապված խնդիրներ, մասնավորապես, էլեկտրոնային մատյանների ուշ լրացում (ժամկետից խախտում), լրացված թեմաների անհամապատասխանություն ՕԹՊ-ներին, որոշ աշակերտների մոտ գնահատականների բացակայություն: Հորդորեց լինել ավելի ուշադիր և սահմանված աշխատանքները կատարել ժամանակին ու պատշաճ, ինչպես նաև մեթոդմիավորման նախագահին հանձնարարեց ամենշաբաթյա ստուգումներ իրականացնել և դրանց ամփոփ տվյալները ներկայացնել ուսումնական մասին:

*Որոշեցին՝* Մեթոդմիավորման նախագահի կողմից իրականացնել էլեկտրոնային մատյանների ամենշաբաթյա ստուգումներ, դրանց արդյունքներով ի հայտ եկած խնդիրները ներկայացնել ուսումնական գծով փոխտնօրեն Ս. Ավանեսյանին:

*Լսեցին 7.* Աշնանային արձակուրդի ժամանակացույցի քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց աշնանային արձակուրդի ժամանակացույցը նշեց, որ աշնանային արձակուրդը սկսվում է.

I դասարաններում՝ հոկտեմբերի 17-30-ը ներառյալ:

II դասարաններում՝ հոկտեմբերի 24-30-ը ներառյալ:

III դասարաններում՝ հոկտեմբերի 24-30-ը ներառյալ:

IV դասարաններում՝ հոկտեմբերի 24-30-ը ներառյալ:

Այդ ժամանակահատվածի համար անհրաժեշտ է աշակերտներին տալ հանձնարարություններ՝ առաջադրանքներ, ընթերցանության համար նյութեր:

Հոկտեմբերի 31-ից բոլոր դասարաններում վերսկսվում է դասապրոցեսը:

*Արտահայտվեցին՝* Կ. Պողոսյանը:

Պողոսյանը նշեց, որ 4-րդ դասարաններում անհրաժեշտ է աշակերտներին աստիճանաբար նախապատրաստել գիտելիքների ստուգման գործընթացին և արձակուրդների հանձնարարություններում նպատակահարմար է ներառել նաև դրա հետ կապված կետեր:

*Որոշեցին՝* Նախքան աշակերտներին աշնանային արձակուրդի ուղարկելը տալ հանձնարարություններ և տեղեկացնել արձակուրդների ժամանակացույցի մասին:

***Լսեցին 8.*** Ցուցադրական դասերի, դաս-միջոցառումների կազմակերպման մասին հարցը:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց ցուցադրական դասերի, դաս-միջոցառումների կազմակերպման անհրաժեշտության մասին, քանի որ դասի այս տիպերը լինում են օրինակելի, ուսուցանող, որտեղ հաշվի են առնվում դասապրոցեսի կազմակերպման համար անհրաժեշտ բոլոր մանրուքները: Կարևորվեց նաև բաց դասերի կազմակերպումը, քանի որ հնարավորություն է ստեղծվում ուսուցիչների ձեռք բերած դրական փորձը տարածել և մասայականացնել: Զեկուցողը ներկայացրեց նաև բաց դասերի, բաց դաս-միջոցառումների, միջոցառումների ժամանակացույցի նախագիծը:

***Արտահայտվեցին՝*** Ռ. Շալունց, Կ. Մալխասյանը:

Արտահայտվողներն առաջարկեցին հիմք ընդունելով փոխտնօրեն Ս. Ավանեսյանի առաջարկը՝ կազմել ժամանակացույց, ըստ որի կազմակերպել բաց դասեր, դաս-միջոցառումներ՝ առաջին կիսամյակի ընթացքում, հումանիտար առարկաների մեթոդմիավորման անդամ բոլոր ուսուցիչների կողմից:

***Որոշեցին՝*** Տարրական դասարանների մեթոդմիավորման անդամ ուսուցիչների կողմից անցկացնել բաց դասեր, բաց դաս-դաս միջոցառումներ՝ ժամանակացույցի համաձայն, որը կցվում է:

Մ/Մ նախագահ՝ _____ Ռ. Շալունց

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ _____ Ս. Ավանեսյան

**«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4**

«11» նոյեմբերի 2022թ. ք. Գորիս

**Նիստին ներկա էին «Տարրական դասարանների մեթոդմիավորման» բոլոր անդամները:**

**Նիստին ներկա էր ուսումնական գծով փոխտնօրեն Ս. Ավանեսյանը:**

**Օ Ր Ա Կ Ա Ր Գ**

1. Տարրական դասարանների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
2. Հաղորդում Տարրական դասարանների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
3. Տնօրենության կողմից գրավոր աշխատանքների կազմակերմում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան )
4. III «Դ» դասարանում «Ես և շրջակա աշխարհը» առարկայից անցկացված «Մոլորակը մենք ենք» թեմայով միջոցառում:
(զեկուցող՝Ի. Ջավահիրյան )
5. Հոկտեմբեր ամսա օրվա դասի պլանների (այսուհետ՝ ՕԴՊ) էլեկտրոնային տարբերակի ընդունում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
6. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան )
7. II «Գ» դասարանում, «Մայրենի» առարկայից, «Ժողովուրդն իմաստուն է» թեմայով դաս-միջոցառում:
(զեկուցող՝ Ա. Միքայելյան, ՄՄ անդամներ)
8. Տարրական դասարանների մասնակցությամբ «Ոսկեհեր աշուն» միջոցառման անցկացման մասին:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
9. Դպրոցի ֆուտբոլային թիմի մասնակցությունը ֆեդերացիայի կողմից կազմակերպված մրցումների մասին:
(զեկուցող՝Ա. Աբգարյան)

***Լսեցին 1.*** «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

***Արտահայտվեցին՝***

***Որոշեցին՝*** Հաստատել 2022-2023 ուսումնական տարվա Տարրական դասարանների մեթոդմիավորման 4-րդ նիստի օրակարգը:

***Լսեցին 2.*** Հաղորդում՝ Տարրական դասարանների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
Զեկուցողը ներկայացրեց Տարրական դասարանների մեթոդմիավորման նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց, որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ, սահմանված ժամկետներում:

*Արտահայտվեցին՝*

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն Տարրական դասարանների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

*Լսեցին 3.* Տնօրենության կողմից գրավոր աշխատանքների կազմակերման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան )

Զեկուցողը նշեց, որ ինչպես նախորդ ուսումնական տարվա ընթացքում, այս ուսումնական տարվա 1-ին և 2-րդ կիսամյակների ընթացքում նույնպես 2-4-րդ դասարանների աշակերտներին տրվելու են տնօրենության կողմից գրավորներ «Մաթեմատիկա» և «Մայրենի» առարկաներից :

*Արտահայտվեցին՝* 2-րդ, 3-րդ և 4-րդ դասարանների դասվարները

Արտահայտվողներն առանձին-առանձին ներկայացրին «Մաթեմատիկա» և «Մայրենի» առարկաներից իրենց դասարաններում անցած թեմաները, որոնք հիմք կհանդիսանան գրավոր աշխատանքների կազմման համար:

*Որոշեցին՝* Տնօրենության կողմից գրավոր աշխատանքները անցկացնել նշված ժամանակահատվածում և ստուգել աշակերտների գիտելիքների մակարդակը:

*Լսեցին 4.* III «Դ» դասարանում «Ես և շրջակա աշխարհը» առարկայից անցկացված «Մոլորակը մենք ենք» թեմայով միջոցառման մասին:

(զեկուցող՝Ի. Ջավահիրյան)

Զեկուցողը ներկայացրեց, որ նոյեմբերի 14-ին, Գորիսի Յուրի Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի III «Դ» դասարանը կազմակերպել էր միջոցառում «Մոլորակը մենք ենք» խորագրով: Միջոցառման ընթացքում երեխաները ներկայացրեցին երկիր մոլորակին սպառնացող վտանգի մասին: Ծավալուն ինֆորմացիա հաղորդեցին 100 և ավելի տարի չքայքայվող թափոնների մասին: Նշեցին, որ դրանք չեն ենթարկվում կենսաբանական քայքայման՝ առաջացնելով կայուն աղտոտվածություն: Հանգամանալից ներկայացրեցին, թե ինչպես կարող են թափոնները, որպես երկրորդային հումք, օգտագործել:

Դասվար Ջավահիրյանը նշեց, որ ինքը շատ ուրախ է, որ աշակերտները զինվեցին այսպիսի արժեքավոր գիտելիքներով և դա ի ցույց կդնեն գործնականում: Եվ քանի որ բնությունը մեզ օժտել է բանականությամբ, որպեսզի մենք կարողանանք բացահայտել նրա հանելուկները, բայց պետք չէ գերագնահատել մեր հնարավորությունները, քանի որ նա հեշտությամբ մեզանից հաշվեհարդար կտեսնի: Հավելեց, որ շատ է կարևորում այսպիսի ինֆորմատիվ միջոցառումների կազմակերպումը և դպրոցներում և բոլոր ուսումնական հաստատություններում :

*Արտահայտվեցին՝* Ռ. Շալունցը

Ռիտա Շալունցը իր ելույթում գնահատանքի խոսքերով ողջունեց դասվարի կատարած աշխատանքը, ուսուցչուհուն շնորհավորեց նման գեղեցիկ միջոցառման կազմակերպան համար:

*Որոշեցին՝* Հաջորդ կիսամյակի ընթացքում ևս մեկ անգամ անդրադարձ կատարել շրջակա միջավայրի պաշտպանությանը և «Մոլորակը մենք ենք» խորագրով միջոցառումը ևս մեկ անգամ ներկայացնել դպրոցի աշակերտների համար:

*Լսեցին 5.* Հոկտեմբեր ամսա օրվա դասի պլանների (այսուհետ՝ ՕԴՊ) էլեկտրոնային տարբերակի ընդունման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

*Արտահայտվեցին՝* Ավանեսյանը նշեց, որ ՕԴՊ-ների մեջ ԿԱՊԿՈՒ աշակերտների համար նախատեսված աշխատանքները անհրաժեշտ է համապատասխանեցնել ԱՈՒՊ-ին:

Զեկուցողը նշեց, որ ուսուցիչների կողմից ներկայացրած աշխատանքները ընդունել և ստուգել է: 4-րդ դասարանների դասվարները ներկայացրել են «Ես և շրջակա աշխարհը» և «Տեխնոլոգիա» առարկաների ՕԴՊ-ները ամբողջ կիսամյակի համար: ՕԴՊ-ներ չեն ներկայացրել նաև մեթոդմիավորման անդամներ՝ Աննա Աբգարյանը, Թամարա Հովհաննիսյանը, Սոնա Միրզոյանը, Ալեքսանդր Հայրապետյանը:

Ավանեսյանը նշեց, որ Ալինա Միքայլեյանի, Ռիտա Շալունցի և Իրինա Ջավահիրյանի կողմից ներկայացված ՕԴՊ-ների ստուգման արդյունքում որոշակի թերություններ են արձանագրվել, որոնց վերաբերյալ ևս մեկ անգամ պարզաբանումներ են կատարվել և առաջարկվել է կատարել շտկումները:

*Որոշեցին՝* 2-4-րդ դասարաններում դասավանդվող բոլոր առարկաների համար ՕԴՊ-ները ներկայացնել ուսումնական մաս յուրաքանչյուր ամսվա ավարտին:

*Լսեցին 6.* Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց մատենավարության հետ կապված նախորդ ժամանակահատվածի թերությունները, առաջարկեց ժամանակին կատարել գրանցումները՝ հետագա խնդիրներից խուսափելու համար:

ՄՄ նախագահը նշեց, որ ստուգման արդյունքում նկատել է, որ որոշ ուսուցիչների մոտ տնային աշխատանքի բաժնում բացակայում են գրառումները, հատկապես «Մայրենի» առարկայի համար նշված չեն, թե դասը այդ օրվա համար ինչ է հանձնարարված՝ կարդալ, պատմել, անգիր և այլն:

*Արտահայտվեցին՝* Ս.Ավանեսյանը:

Ավանեսյանը նշեց, որ արդեն իսկ որոշ ուսուցիչների մոտ արձանագրվել են մատենավորության հետ կապված խնդիրներ, մասնավորապես, էլեկտրոնային մատյանների ուշ լրացում (ժամկետի խախտում), ՕԹՊ-ների հետ լրացված թեմաների անհամապատասխանություն, որոշ աշակերտների մոտ գնահատականների բացակայություն: Հորդորեց լինել ավելի ուշադիր և սահմանված աշխատանքները կատարել ժամանակին ու պատշաճ, ինչպես նաև մեթոդմիավորման նախագահին հանձնարարեց ամենշաբաթյա ստուգումներ իրականացնել և դրանց ամփոփ տվյալները ներկայացնել ուսումնական մասին:

*Որոշեցին՝* Մեթոդմիավորման նախագահի կողմից իրականացնել էլեկտրոնային մատյանների ամենշաբաթյա ստուգումներ, դրանց արդյունքներով ի հայտ եկած խնդիրները ներկայացնել ուսումնական գծով փոխտնօրեն Ս. Ավանեսյանին:

*Լսեցին 7.* II «Գ» դասարանում, «Մայրենի» առարկայից, «Ժողովուրդն իմաստուն է» թեմայով դաս-միջոցառում:

(զեկուցող՝ Ա. Միքայելյան, ՄՄ անդամներ)

Զեկուցողը նշեց, որ II դասարաններում «Մայրենի» առարկայից նախատեսված դաս-միջոցառումը անց է կացվել II «Գ» դասարանում, «Ժողովուրդն իմաստուն է» թեմայի ամփոփման դասին: Ա. Միքայելյանը նշեց, որ թեմաները շատ հետաքրքիր էին և երեխաների կողմից շատ սիրված:

Աշակերտները դասին ներկայացան բեմական հագուստներով: Յուրաքանչյուր աշակերտ ելույթ էր ունենում՝ ներկայացնելով հեքիաթից մի դրվագ, պատմում իր հերոսի մասին: Այնուհետև աշակերտները ներկայացրին բանահյուսության ժանրերից նմուշներ, առաջարկեցին հանելուկներ, արտասանեցին շուտասելուկներ, խնդուկներ, հաշվելուկներ, առակներ՝ նշելով հեղինակներին: Հեքիաթների արքայադուստրերը գեղեցիկ երգ-պարով հանդես եկան: Դասի վերջում աշակերտները օրհնանք-բարեմաղթանքներ գրեցին կպչուն թղթերի վրա և փակցրեցին պաստառին:

*Արտահայտվեցին՝* ՄՄ անդամները ողջունեցին իրականացված միջոցառումը:

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն միջոցառման մասին ներկայացված տեղեկատվությունը:

*Լսեցին 8.* Տարրական դասարանների մասնակցությամբ «Ոսկեհեր աշուն» միջոցառման անցկացման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը նշեց, որ «Ոսկեհեր աշուն» միջոցառումը կազմակերպվել է ՄՄ անդամների կողմից և այն բոլորի համատեղ ջանքերով է իրականություն դարձել: Միջոցառումը անց է կացվել դպրոցի բակում, ուսուցիչները և ծնողները բակում տեղադրված տաղավարները ձևավորել էին աշնանային բերքահավաքի առատ բերք ու բարիքով, գեղեցիկ ձևավորված միրգ ու բանջարեղենով, հայկական ավանդական դետալներով:

*Արտահայտվեցին՝* ՄՄ անդամները

Արտահայտվողները նշեցին, որ աշակերտները ներկայացնում էին ցորենը արկանքի օգնությամբ ալյուր դարձնելու գործընթացը, ալյուրից խմոր ու հաց պատրաստելու ընթացքը: Յուրաքանչյուր դասարան ելույթ էր ունենում յուրահատուկ համարներով, գեղեցիկ երգ ու պարով, արտասանությամբ, բեմականացմամբ, նկարների ցուցահանդեսով, շարադրությունների ընթերցմամբ:

Միջոցառումը չկրկնվող էր և հետաքրքիր:

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն միջոցառման մասին ներկայացված տեղեկատվությունը:

*Լսեցին 9.* Դպրոցի ֆուտբոլային թիմի մասնակցությունը Հայաստանի ֆուտբոլային ֆեդերացիայի կողմից կազմակերպված մրցումներին մասնակցության մասին:

(զեկուցող՝ Ա. Աբգարյան)

Զեկուցողը նշեց, որ Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի մինչև 10 տարեկանների խմբի սաները, մասնակցել են Հայաստանի ֆուտբոլային ֆեդերացիայի կողմից կազմակերպված խաղերին և ունեցել հետևյալ արդյունքները:

Համայնքային փուլում 2022թ-ի հոկտեմբերի 5-ին մինչև տասը տարեկանները ՀՖՖ-ի կողմից կազմակերպած ֆուտբոլի դպրոցականների առաջնության խաղում զբաղեցրել են առաջին տեղը:

Մարզային փուլում 2022թ-ի նոյեմբերի 9-ին մինչև տասը տարեկանները ՀՖՖ-ի կողմից կազմակերպած ֆուտբոլի դպրոցականների առաջնության խաղում, Սիսիանի թիմի հետ խաղում զբաղեցրել են առաջին տեղը:

Մարզային փուլում 2022թ-ի նոյեմբերի 20-ին մինչև տասը տարեկանները ՀՖՖ-ի կողմից կազմակերպած ֆուտբոլի դպրոցականների առաջնության խաղում, Կապանի թիմի հետ խաղում զբաղեցրել են առաջին տեղը:

Հանրապետական փուլում 2022թ-ի նոյեմբերի 23-ին մինչև տասը տարեկանները ՀՖՖ-ի կողմից կազմակերպած ֆուտբոլի դպրոցականների առաջնության խաղում, Եղեգնաձորի թիմի հետ խաղում զբաղեցրել են առաջին տեղը:

Հանրապետական փուլում 2022թ-ի նոյեմբերի 25-ին մինչև տասը տարեկանները ՀՖՖ-ի կողմից կազմակերպած ֆուտբոլի դպրոցականների առաջնության խաղում, Արարատի թիմի հետ խաղում զբաղեցրել են երկրորդ տեղը:

*Արտահայտվեցին՝* ՄՄ անդամները, Ս. Ավանեսյանը

ՄՄ նախագահը և Ավանեսյանը շնորհակալություն հայտնեցին Աբգարյանին անձնվեր աշխատանքի համար: Նշեցին, որ պարտաճանաչ և նպատակային աշխատանքը ոգևորիչ է, դրական է ազդում աշակերտների ֆիզիկական

պատրաստվածության վրա, ինչպես նաև վարքային դրսևորումների վրա: Ցանկալի է, որ աշխատանքը լինի շարունակական, հաղթանակները՝ շատ:

***Որոշեցին՝*** Ընդունել ի գիտություն միջոցառման մասին ներկայացված տեղեկատվությունը:

Մ/Մ նախագահ՝ _____ Ռ. Շալունց

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ _____ Ս. Ավանեսյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 5

«21» դեկտեմբերի 2022թ. ք. Գորիս

**Նիստին ներկա էին «Տարրական դասարանների մեթոդմիավորման» բոլոր անդամները:**

**Նիստին ներկա էր ուսումնական գծով փոխտնօրեն Ս. Ավանեսյանը:**

**Օ Ր Ա Կ Ա Ր Գ**

1. «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
2. Հաղորդում Տարրական դասարանների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
3. 2022-2023 ուսումնական տարվա առաջին կիսամյակում տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքների արդյունքների քննարկում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
4. III «Բ» դասարանում «Ես և շրջակա աշխարհը» առարկայից անցկացված բաց-դաս՝ «Երկնային մարմիններ» և «Տարվա եղանակներ» թեմաներից:
(զեկուցող՝ Ա. Աղաբեկյան)
5. Նոյեմբեր ամսվա օրվա դասի պլանների (այսուհետ՝ ՕԴՊ) էլեկտրոնային տարբերակի ընդունում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
6. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
7. I «Գ» դասարանում, «Մաթեմատիկա» առարկայից, դաս-միջոցառում:
(զեկուցող՝ Կ. Մալխասյան, ՄՄ անդամներ)
8. IV «Գ» դասարանում «Թե ինչպես տոնածառի խաղալիքները փրկեցին ժամանակը» թեմայով համակցված դաս-միջոցառում՝ «Տեխնոլոգիա» առարկայից, նվիրված ուրախ Ամանորին:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
9. Առաջին կիսամյակի գրավոր աշխատանքների քանակի ու ծրագրերի կատարողականի քննարկում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
10. Առաջին կիսամյակի ընթացքում կատարած դասալսումների քննարկում, վերլուծություն և ամփոփում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց )
11. ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ ուսումնական գործընթացի պատշաճ իրականացումը:
(զեկուցող Ս. Ավանեսյան)

***Լսեցին 1.*** «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

***Արտահայտվեցին՝***

***Որոշեցին՝*** Հաստատել 2022-2023 ուսումնական տարվա Տարրական դասարանների մեթոդմիավորման 5-րդ նիստի օրակարգը:

***Լսեցին 2.*** Հաղորդում՝ Տարրական դասարանների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց Տարրական դասարանների մեթոդմիավորման նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց, որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ, սահմանված ժամկետներում:

*Արտահայտվեցին՝*

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն Տարրական դասարանների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

*Լսեցին 3.* 2022-2023 ուսումնական տարվա առաջին կիսամյակում տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքների արդյունքների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը կարևորեց անկողմնակալ վերաբերմունքը՝ հատկապես գրավոր աշխատանքների ստուգման հարցում: Հայտնեց նաև տնօրենության կողմից տրված գրավոր աշխատանքների արդյունքները (կցվում է ամփոփագիրը), մասնավորապես կանգ առավ տեղ գտած ակնառու թերությունների վրա, առաջարկեց ուշադրություն դարձնել ուղղագրության, կետադրության վրա:

*Արտահայտվեցին՝* Վ. Գրիգորյանը, Գ. Ավագյանը

Արտահայտվողները անհրաժեշտ համարեցին՝ բոլոր դասարաններում, որքան հնարավոր է, սովորողներին իրազեկել մայրենի լեզվի կարևորության և գրագիտության իմացության անհրաժեշտության մասին:

Ավագյանն առաջարկեց՝ հաճախակի 2-4-րդ դասարաններում տալ ուղղագրական, կետադրական առաջադրանքներ պարունակող առաջադրանքներ:

Գրիգորյանը նշեց, որ անհրաժեշտ է ուսուցողական և թեմատիկ գրավոր աշխատանքներն անցկացնել չափորոշչահեն ուսուցման սկզբունքներով:

*Որոշեցին՝* Որոշեցին ավելի հետևողական աշխատանքներ իրականացնել՝ բարձր արդյունքներ ցուցաբերելու համար:

*Լսեցին 4.* III «Բ» դասարանում «Ես և շրջակա աշխարհը» առարկայից անցկացված բաց դաս՝ «Երկնային մարմիններ» և «Տարվա եղանակներ» թեմաների մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Աղաբեկյան)

Զեկուցողը նշեց, որ Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի III «Բ» դասարանի աշակերտներն արդեն ծանոթացել են «Երկնային մարմիններ» թեմայի հետ, ինչը հիանալի առիթ էր, որ դեկտեմբերի 1-ին աշակերտները իրենց անցած թեմայի շուրջ անցկացնեն դաս-միջոցառում «Շրջված դասարան» մեթոդով: Աշակերտները բաժանվել էին խմբերի, յուրաքանչյուր խումբ իրեն հանձնարարված երկնային մարմնի մասին տեղեկություններ ներկայացրեց, պաստառի վրա ցույց տալով այն: Խմբերը միմյանց հանելուկներ առաջարկեցին, «Վիենի դիագրամ»-ի պաստառի վրա բոլոր աշակերտների մասնակցությամբ կատարեցին անրադարձ: Կատարեցին երգ նվիրված տիեզերքին ու երկնային մարմիններին: Դասին մասնակից էր նաև ԿԱՊԿՈՒ աշակերտը, կարեղացավ թղթերով ապլիկացիոն աշխատանք կատարել և արև պատրաստել: Այնուհետև աշակերտները Արեգակի ամբողջական պտույտի վերաբերյալ տեղեկության արդյունքում, ուսուցչի ուղղորդմամբ, ներկայացրեցին տարվա եղանակները:

*Արտահայտվեցին՝* ՄՄ անդամները

Արտահայտվողները ողջունեցին կազմակերպված բաց դասերը, նշեցին, որ տվյալ թեմաները պետք է կիրառել նաև հաջորդ ուսումնական տարիների ընթաքցում:

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն բաց դասի մասին ներկայացված տեղեկատվությունը:

*Լսեցին 5.* Նոյեմբեր ամսվա օրվա դասի պլանների (այսուհետ՝ ՕԴՊ) էլեկտրոնային տարբերակի ընդունման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ ուսուցիչների կողմից ներկայացրած աշխատանքները ընդունել և ստուգել է: Հոկտեմբեր ամսվա համար ՕԴՊ-ներ էին ներկայացրել Ալինա Միքայլեյանը, Իրինա Ջավահիրյանը: Ավելի վաղ տեղի ունեցած խորհրդակցության և քննարկման արդյունքում որոշում էր կայացվել այս տարի 1-ին դասարանում դասավանդող դասվարներից չպահանջել ՕԴՊ-ները, հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2023-2024 ուսումնական տարվանից ուսուցումը կիրականացվի նոր չափորոշիչներով: 4-րդ դասարանների դասվարները ներկայացրել են «Ես և շրջակա աշխարհը» և «Տեխնոլոգիա» առարկաների ՕԴՊ-ները՝ ամբողջ կիսամկյակի համար:

Ավանեսյանը հատուկ շնորհակալություն հայտնեց դասվար Ջավահիրյանին՝ լավ աշխատանքի համար:

*Արտահայտվեցին՝* Վ. Գրիգորյանը:

Գրիգորյանը նշեց, որ քանի որ բոլոր ուսուցիչներն աշխատում են նույն թեմատիկ պլաններով և նույն թեմատիկ հաջորդականությամբ, ՕԴՊ-ների այս տարբերակները հարմար են բոլոր զուգահեռ դասարաններում դասավանդող ուսուցիչների համար և ուսուցիչների կողմից արդեն իսկ մշակված ու հավանության արժանացած ՕԴՊ-ները կիրառվում են նաև զուգահեռ դասարանների մյուս ուսուցիչների կողմից:

*Որոշեցին՝* 2-4-րդ դասարաններում դասավանդվող բոլոր առարկաների համար ՕԴՊ-ները ներկայացնել ուսումնական մաս յուրաքանչյուր ամսվա ավարտին, ինչպես նաև 1-ին կիսամյակի ՕԴՊ-ների ներկայացման համար վերջնաժամկետ սահմանել հունվար ամսվա առաջին 10-օրյակը:

*Լսեցին 6.* Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

*Արտահայտվեցին՝* Զեկուցողը ներկայացրեց մատենավարության հետ կապված 1-ին կիսամյակի ընթացքում արձանագրված թերությունները, առաջարկեց ժամանակին կատարել գրանցումները՝ հետագա խնդիրներից խուսափելու համար:

*Որոշեցին՝* Ս. Ավանեսյանը:

Ավանեսյանը նշեց, որ արդեն իսկ որոշ ուսուցիչների մոտ արձանագրվել են մատենավորության հետ կապված խնդիրներ, մասնավորապես, էլեկտրոնային մատյանների ուշ լրացում (ժամկետների խախտում), լրացված թեմաների անհամապատասխանություն ՕԹՊ-ներին, որոշ աշակերտների մոտ գնահատականների բացակայություն: Հորդորեց լինել ավելի ուշադիր և սահմանված աշխատանքները կատարել ժամանակին ու պատշաճ, ինչպես նաև մեթոդմիավորման նախագահին հանձնարարեց ամենշաբաթյա ստուգումներ իրականացնել և դրանց ամփոփ տվյալները ներկայացնել ուսումնական մասին:

*Որոշեցին՝* Մեթոդմիավորման նախագահի կողմից իրականացնել էլեկտրոնային մատյանների ամենշաբաթյա ստուգումներ, դրանց արդյունքներով ի հայտ եկած խնդիրները ներկայացնել ուսումնական գծով փոխտնօրեն Ս. Ավանեսյանին:

*Լսեցին 7.* Ի «Գ» դասարանում, «Մաթեմատիկա» առարկայից, դաս-միջոցառման մասին հարցը:

(զեկուցող՝ Կ. Մալխասյան)

Զեկուցողը նշեց, որ Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի 1-ին «Գ» դասարանի աշակերտներն արդեն ծանոթացել են բոլոր թվանշանների

հետ, ինչը հիանալի առիթ էր, որ դեկտեմբերի 20-ին նրանք ինքնատիպ դերակատարումներով հյուրընկալեն ձմռանը:
1-ից 10 թվերը ներկայացան հատուկ դերերով: Մեկտեղվել էին հրամանատար 1-ը, նկարիչ 2-ը, պաղպաղակասեր 3-ը, դերձակ 4-ը, պարուհի 5-ը, երաժշտասեր 6-ը, հնչեղաձայն 7-ը, գեղատես 8-ը, բժիշկ 9-ը և գիտունիկ 10-ը:
Աշակերտները միմյանց խնդիրներ առաջադրեցին, կարևորեցին մաթեմատիկան և ուղերձ հղեցին սիրել ու գնահատել մաթեմատիկան:
Նրանք երգով ու արտասանությամբ դիմավորեցին Ձմեռ պապին, որը չէր մոռացել փոքրիկների համար նվերներ բերել: Աշակերտները խոստացան լավ սովորել և լինել ուշիմ:

*Արտահայտվեցին՝* ՄՄ անդամները
Արտահայտվողները ողջունեցին կազմակերպված բաց դասերը, նշեցին, որ տվյալ թեմաները պետք է կիրառել նաև հաջորդ ուսումնական տարիների ընթաքցում:

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն բաց դասի մասին ներկայացված տեղեկատվությունը:

*Լսեցին 8.* IV «Գ» դասարանում «Թե ինչպես տոնածառի խաղալիքները փրկեցին ժամանակը» թեմայով համակցված դաս-միջոցառման մասին հարցը:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը նշեց, որ դեկտեմբերի 21-ին Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի 4-րդ «Գ» դասարանում «Տեխնոլոգիա» առարկայից տեղի ունեցավ բաց դաս-միջոցառում՝ «Ինչպես տոնածառի խաղալիքները փրկեցին հափշտակված ժամանակը» թեմայով: «Տեխնոլոգիա» առարկայի «Աշխատանք մանածագործական նյութերով» բաժնի «Տոնածառի խաղալիքներ» թեմայից աշակերտները՝ դասվար Ռիտա Շալունցի հանձնարարությամբ, պատրաստել էին բնական և արհեստական կտորներից խաղալիքներ: Միջոցառման սկզբում ներկայացրեցին ձեռքի աշխատանքները, տեղեկատվություն ներկայացրին օգտագործված հումքի տեսակների մասին, որից հետո ձևավորեցին տոնածառը: Այնուհետև, աղջիկները վերածվելով տոնածառի խաղալիքների, կարողացան չար և ագահ թագավորից, ով հափշտակել էր ժամանակը, ետ վերադարձնել այն ժամացույցին և տոնել Ամանորը:
Աշակերտները բեմական հագուստներով, գեղեցիկ արտասանությամբ ու երգ ու պարով ներկայացրեցին մի հեքիաթ, որտեղ բարին հաղթեց չարին:

*Արտահայտվեցին՝* Ի. Ջավահիրյանը
Ի. Ջավահիրյանը արտահայտեց իր հիացմունքը, աշակերտների դերային խաղի և սահուն արտասանությունների, սցենարի հագեցվածության վերաբերյալ:

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն դաս-միջոցառման մասին ներկայացված տեղեկատվությունը:

*Լսեցին 9.* Առաջին կիսամյակի գրավոր աշխատանքների քանակի ու ծրագրերի կատարողականի քննարկման մասին հարցը:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը կարևորեց ըստ չափորոշչային պահանջների տրված գրավոր աշխատանքների համապատասխանությունը ուսուցիչների կողմից կատարված գրանցումներին և տրված թեմատիկ, գործնական աշխատանքների քանակին: Նշեց թեմատիկ պլանների կատարողականի մասին:

*Արտահայտվեցին՝* Ս. Ավանեսյանը:
Ավանեսյանը նշեց, որ գործնական աշխատանքներ հանձնարարելիս ուսուցիչը ազատ է ընտրության մեջ, և որ թեմատիկ ու գործնական աշխատանքները տրված են ըստ ժամաքանակի:

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն առաջին կիսամյակի թեմատիկ գրավոր և գործնական աշխատանքների կատարողականը, ինչպես նաև մեթոդմիավորման նախագահի կողմից կատարել պարբերական ստուգումներ թեմատիկ գրավոր աշխատանքների բովանդակության և քանակի հետ կապված:

*Լսեցին 10.* Առաջին կիսամյակի ընթացքում կատարած դասալսումների քննարկման, վերլուծության և ամփոփման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց 2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում կատարված դասալսումների, բաց դասերի, դաս-միջոցառումների արդյունքների վերլուծությունը: Նշեց, որ փոխադարձ դասալսումներն անհրաժեշտ են դասի որակը բարձրացնելու և մասնագիտական, մանկավարժական փորձի փոխանակման համար: Զեկուցողը մանրամասն նշեց տեղ գտած թերություններն ու բացթողումները, ինչպես նաև ներկայացրեց 1-ին կիսամյակի ընթացքում իրականացված դասալսումների ամփոփագիրը:

*Արտահայտվեցին՝* Ս. Ավանեսյանը

Արտահայտվողը կարևորեց յուրաքանչյուր դասալսում, քանի որ այն միտված է օգնելու և աջակցելու ուսուցիչներին՝ հատկապես սկսնակներին: Նշվեց նաև դասալսումների քննարկման և խնդիրների վեր հանման մասին: Ս. Ավանեսյանը նշեց նաև փոխադարձ դասալսումների և քննարկումների ժամանակ մյուս մեթոդմիավորումների կազմում ընդգրկված ուսուցիչների հետ համագործակցության կարևորության մասին:

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն 2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում կատարված դասալսումների, բաց դասերի, դաս-միջոցառումների արդյունքները (կցվում է ամփոփագիրը), ինչպես նաև ձեռնարկել միջոցառումներ թերությունները շտկելու ուղղությամբ:

*Լսեցին 11.* ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ ուսումնական գործընթացի պատշաճ իրականացման մասին հարցը:

(զեկուցող Ս. Ավանեսյան)

Զեկուցողը բոլորի ուշադրությունը հրավիրեց ուսուցիչ-ծնող համագործակցությանը: Առաջարկեց հաճախակի կազմակերպել քննարկումներ ուսուցչի, ուսուցչի օգնականների և ծնողների միջև՝ առաջացած խնդիրները լուծելու նպատակով:

*Արտահայտվեցին՝* Ն. Գալստյանը, Անահիտ Աղաբեկյանը, Արմինե Հարությունյանը:

Արտահայտվողները նշեցին, որ հաճախակի են հանդիպում խնդիրներ, երբ որ ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատանքը որոշակի կերպով չի հաջողվում:

Խաչատրյանը նշեց, որ կան ԿԱՊԿՈՒ աշակերտներ, որոնց հետ աշխատանքը բարդ է ոչ միայն ուսուցչի, այլ նաև ուսուցչի օգնականի համար: Առաջարկվեց ապահովել ԱՈՒՊ-ով սահմանված նպատակները:

*Որոշեցին՝* Ապահովել ուսուցիչ-ուսոցչի օգնական-ԳՏՄԱԿ-ի ներկայացուցիչ-ծնող կապը, այն ավելի սերտացնել, ինչպես նաև հաճախակի կազմակերպել եռակողմ հանդիրումներ և քննարկումներ՝ ուսուցիչների, ուսուցչի օգնականների, ծնողների միջև, ըստ անհրաժեշտության ընդգրկել նաև ԳՏՄԱԿ-ի ներկայացուցիչներին: ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատանքներն իրականացնել հիմք ընդունելով աշակերտների ԱՈՒՊ-ները և դրանցում սահմանված պարզեցումները:

Մ/Մ նախագահ՝ _____ Ռ. Շալունց

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ _____ Ս. Ավանեսյան

**«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 6**

«10» հունվարի 2023թ. ք. Գորիս

**Նիստին ներկա էին «Տարրական դասարանների մեթոդմիավորման» բոլոր անդամները :**

**Նիստին ներկա էր ուսումնական գծով փոխտնօրեն Ս. Ավանեսյանը:**

**Օ Ր Ա Կ Ա Ր Գ**

1. «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
2. Հաղորդում Տարրական դասարանների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
3. Տարրական դասարանների մեթոդմիավորման 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ժամաբաժանման փոփոխություն և հաստատում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
4. Տարրական դասարանների մեթոդմիավորման անդամ ուսուցիչների պարտադիր վերապատրաստման մասնակիցների ցանկի քննարկում:
(զեկուցող ՝ Ս. Ավանեսյան)

***Լսեցին 1.*** «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

***Արտահայտվեցին՝***

***Որոշեցին՝*** Հաստատել 2022-2023 ուսումնական տարվա Տարրական դասարանների մեթոդմիավորման 6-րդ արտահերթ նիստի օրակարգը:

***Լսեցին 2.*** Հաղորդում՝ Տարրական դասարանների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
Զեկուցողը ներկայացրեց Տարրական դասարանների մեթոդմիավորման նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց, որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ, սահմանված ժամկետներում:

***Արտահայտվեցին՝***

***Որոշեցին՝*** Ընդունել ի գիտություն Տարրական դասարանների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

***Լսեցին 3.*** Տարրական դասարանների մեթոդմիավորման 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ժամաբաժանման փոփոխության և հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
Զեկուցողը ներկայացրեց Տարրական դասարանների մեթոդմիավորման 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի փոփոխությունները:

***Արտահայտվեցին՝*** Ս. Ավանեսյանը

Ավանեսյանը նշեց, որ 2-րդ կիսամյակի ընթացքում ոչ մի փոփոխություն չկա, բոլոր դասարաններում ժամաքանակը նույնն է, ուսուցիչների մոտ ժամերի փոփոխություններ չկան:
Հանձնարարվեց ևս մեկ անգամ ճշտել դասացուցակները և փոխանցել օպերատորներին, մատյանում լրացնելու համար:

***Որոշեցին՝*** Հաստատել Տարրական դասարանների մեթոդմիավորման 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ժամաբաժանումը (կցվում է ժամաբաժանումը):

***Լսեցին 4.*** Տարրական դասարանների մեթոդմիավորման անդամ ուսուցիչների պարտադիր վերապատրաստման մասնակիցների ցանկի քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը կարևորեց ուսուցիչների պարտադիր վերապատրաստման գործընթացին մասնակցությունը, նշեց, որ 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցիցի պարտադիր վերապատրաստմանը պետք է մասնակցեն Ալինա Միքայելյան, Կարինե Պողոսյանը, Կարինե Մալխասյանը, Արմինե Հարությունյանը, Իրինա Ջավահիրյանը, Տաթևիկ Փարսադանյանը,Անահիտ Աղաբեկյանը, Ալեքսանդր Հայրապետյանը, քանի որ կա՛մ լրացել է նրանց պարտադիր վերապատրաստման 5 տարին, կա՛մ մինչ այդ երբեք չեն վերապատրաստվել:

***Արտահայտվեցին՝*** Ռ. Շալունցը, Վ. Գրիգորյանը:
Արտահայտվողները նշեցին, որ արդի մեթոդներին և հնարներին տիրապետելը հատկապես անհրաժեշտ է դասի արդյունավետությունը բարձրացնելու համար: Նրանք կարևորեցին պարտադիր վերապատրաստման գործընթացը, քանի որ այն հնարավորություն է տալիս ծանոթանալ կատարվող փոփոխություններին ու նորամուծություններին և կատարել փորձի փոխանակում:

***Որոշեցին՝*** Ապահովել ուսուցիչների մասնակցությունը կազմակերպվող պարտադիր վերապատրաստումներին:

Մ/Մ նախագահ՝ _____ Ռ. Շալունց

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ _____ Ս. Ավանեսյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 7

«22» հունվարի 2023թ. ք. Գորիս

**Նիստին ներկա էին «Տարրական դասարանների մեթոդմիավորման» բոլոր անդամները :**

**Նիստին ներկա էր ուսումնական գծով փոխտնօրեն Ս. Ավանեսյանը:**

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Տարրական դասարանների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
2. Հաղորդում Տարրական դասարանների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
3. II դասարաններում «Ես և շրջակա աշխարհը» առարկայի թեմատիկ գրավոր աշխատանքների քանակության փոփոխություն:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)

*Լսեցին 1.* Տարրական դասարանների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

*Արտահայտվեցին՝*

*Որոշեցին՝* Հաստատել 2022-2023 ուսումնական տարվա Տարրական դասարանների մեթոդմիավորման 7-րդ նիստի օրակարգը:

*Լսեցին 2.* Հաղորդում՝ Տարրական դասարանների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
Զեկուցողը ներկայացրեց Տարրական դասարանների մեթոդմիավորման նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց, որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ, սահմանված ժամկետներում:

*Արտահայտվեցին՝*

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն Տարրական դասարանների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

*Լսեցին 3.* II դասարաններում «Ես և շրջակա աշխարհը» առարկայի թեմատիկ գրավոր աշխատանքների քանակության փոփոխության մասին հարցը:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
Զեկուցողը նշեց, որ 2-րդ դասարանների դասվարներ Գայանե Ավագյանը, Վարդ Գրիգորյանը, Ալինա Միքայելյանն առաջարկել են փոփոխություն կատարել «Ես և շրջակա աշխարհը» առարկայի հաստատված ԹՊ-ում և ՕԹՊ-ում և դրանով 1 թեմատիկ գրավոր աշխատանքի փոխարեն նախատեսել 2 թեմատիկ գրավոր աշխատանք :

*Արտահայտվեցին՝* Գ.Ավագյանը
Գայանե Ավագյանն առաջարկեց II դասարաններում «Ես և շրջակա աշխարհը» առարկայի թեմատիկ գրավոր աշխատանքների I կիսամյակում ունեցած մեկ գրավոր աշխատանքը դարձնել երկուսը:

***Որոշեցին՝*** ԹՊ-ում և ՕԹՊ-ում կատարել համապատասխան փոփոխությունները (կցվում են փոփոխված ԹՊ-ն և ՕԹՊ-ն):

Մ/Մ նախագահ՝ _____ Ռ. Շալունց

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ _____ Ս. Ավանեսյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 8

«20» փետրվարի 2023թ. ք. Գորիս

**Նիստին ներկա էին «Տարրական դասարանների մեթոդմիավորման» բոլոր անդամները.**

1. Շալունց Ռիտա (ՄՄ նախագահ)
2. Դոլունց Արուս
3. Գալստյան Նունե
4. Աղաբեկյան Անուշ
5. Մալխասյան Կարինե
6. Ավագյան Գայանե
7. Գրիգորյան Վարդ
8. Միքայելյան Ալինա
9. Փարսադանյան Տաթևիկ
10. Աղաբեկյան Անահիտ
11. Հարությունյան Արմինե
12. Ջավահիրյան Իրինա
13. Պողոսյա Կարինե
14. Աբգարյան Աննա
15. Հովհաննիսյան Թամարա (փոխարինող՝ Արփինե Տոռոզյան)
16. Միրզոյան Սոնա
17. Հայրապետյան Ալեքսանդր

**Նիստին ներկա էր ուսումնական գծով փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանը:**

## Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
2. Հաղորդում Տարրական դասարանների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
3. «Մաթեմատիկա» առարկայի դրվածքը տարրական՝ 2-4-րդ դասարաններում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
4. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
5. 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ՕԴՊ-ների հետ կապված հարցերի քննարկում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

***Լսեցին 1.*** «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

***Արտահայտվեցին՝***

***Որոշեցին՝*** Հաստատել 2022-2023 ուսումնական տարվա Տարրական դասարանների մեթոդմիավորման 8-րդ նիստի օրակարգը:

***Լսեցին 2.*** Հաղորդում՝ Տարրական դասարանների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց Տարրական դասարանների մեթոդմիավորման նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց, որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ, սահմանված ժամկետներում:

*Արտահայտվեցին՝*

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն Տարրական դասարանների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

*Լսեցին 3.* «Մաթեմատիկա» առարկայի դրվածքը տարրական՝ 2-4-րդ դասարաններում:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը նշեց, որ մարտ ամսվա ընթացքում 2-4-րդ դասարաններում «Մաթեմատիկա» առարկայի ուսումնասիրություն կկատարվի, որի նպատակն է ծանոթանալ աշակերտների գիտելիքների մակարդակին և աջակցել ուսուցիչներին առկա խնդիրների լուծման և դասի արդյունավետության բարձրացման հարցերի շուրջ:

*Արտահայտվեցին՝* Ա. Միքայելյանը, Ս. Ավանեսյանը:

Արտահայտվողները նշեցին, որ «Մաթեմատիկա» առարկայի դրվածքի ուսումնասիրության ընթացքում անհրաժեշտ է կազմակերպել փոխադարձ դասալսումներ ոչ միայն Տարրական դասարանների մեթոդմիավորման ուսուցիչների հետ, այլ ցանկալի է ընդգրկել նաև այլ մեթոդմիավորման ուսուցիչների:

Ս. Ավանեսյանը նշեց, որ մեծ ուշադրություն պետք է դարձնել դասապրոցեսի ժամանակ աշակերտների մասնակցությանը, և աշակերտների ինքնուրույն աշխատելու կարողությունների ու հմտությունների զարգացմանը:

*Որոշեցին՝* Հաջորդիվ ժամանակահատվածում «Մաթեմատիկա» առարկայից իրականացնել դրվածքի ուսումնասիրություն 2-4-րդ դասարաններում և արդյունքները քննարկել ՄՄ և մանկավարժական խորհուրդների նիստերում:

*Լսեցին 4.* Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցի մասին

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցող Շալունցը կարևորեց էլեկտրոնային մատենավարության ստուգման ընթացքը և լրացման կանոնների պահպանումը, ներկայացրեց էլեկտրոնային մատենավարության ստուգման արդյունքները, նշեց յուրաքանչյուր դասարանի բոլոր ուսուցիչների թույլ տված թերությունները: Առանձնացրեց, որ ԹԳ-ի վերնագրի բաժնում պարտադիր պետք է գրված լինի նույն վերնագիրը, ինչ ՕԹՊ-ի մեջ է:

*Արտահայտվեցին՝* Ս. Ավանեսյանը, Ի. Ջավահիրյանը

Ս. Ավանեսյանը կարևորեց ուսուցիչների կողմից աշխատանքի բարեխիղճ կատարումը, ըստ անհրաժեշտության խորհուրդներ տալը և համապատասխան դիտողություններ կատարելը:

*Որոշեցին՝* Պարբերաբար իրականացնել էլեկտրոնային մատյանի դիտարկումներ, բացթողումներ ունեցող ուսուցիչներին տեղեկացնել դրանց մասին և առաջարկել ողջամիտ ժամանակահատված՝ դրանք վերացնելու համար:

*Լսեցին 5.* 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ՕԴՊ-ների հետ կապված քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց ՕԴՊ-ների անհրաժեշտության մասին, կարևորեց դրանց առկայությունը յուրաքանչյուր դասաժամի համար, քանի որ այս գործընթացի արդյունքում հեշտանում է ուսուցչի աշխատանքը և բարձրանում է դասի արդյունավետությունը: Ս. Ավանեսյանը ներկայացրեց նաև ներկայացված

ՕԴՊ-ներում արդեն արձանագրված թերությունները, պատասխանեց ուսուցիչների կողմից բարձրացված հարցերին:

***Արտահայտվեցին՝*** Ա. Դոլունցը, Ն. Գալստյանը

Արտահայտվողները առաջարկեցին երկրորդ կիսամյակի ՕԴՊ-ները կազմել և հանձնել ամեն շաբաթվա վերջում, իսկ աշխատանքները կազմակերպել ինչպես առաջին կիսամյակի ընթացքում:

***Որոշեցին՝*** ՕԴՊ-ների հետ աշխատանքները ավարտել նշված ժամկետներում, իսկ առաջացած խնդիրների դեպքում դիմել ուսումնական մասի ղեկավար Ս. Ավանեսյանին:

Մ/Մ նախագահ՝ _____ Ռ. Շալունց

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ _____ Ս. Ավանեսյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 9

«23» մարտի 2023թ. ք. Գորիս

**Նիստին ներկա էին «Տարրական դասարանների մեթոդմիավորման» բոլոր անդամները.**

1. Շալունց Ռիտա (ՄՄ նախագահ)
2. Դոլունց Արուս
3. Գալստյան Նունե
4. Աղաբեկյան Անուշ
5. Մալխասյան Կարինե
6. Ավագյան Գայանե
7. Գրիգորյան Վարդ
8. Միքայելյան Ալինա
9. Փարսադանյան Տաթևիկ
10. Աղաբեկյան Անահիտ
11. Հարությունյան Արմինե
12. Ջավահիրյան Իրինա
13. Պողոսյա Կարինե
14. Աբգարյան Աննա
15. Տոռոզյան Արփինե
16. Միրզոյան Սոնա
17. Հայրապետյան Ալեքսանդր

**Նիստին ներկա էր ուսումնական գծով փոխտնօրեն Ս. Ավանեսյանը:**

## Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Տարրական դասարանների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
2. Հաղորդում Տարրական դասարանների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
3. 2-4-րդ դասարաններում «Մաթեմատիկա» առարկայի դրվածքի ուսումնասիրության արդյունքների ամփոփում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
4. «Ֆիզկուլտուրա» առարկայի դրվածքի ուսումնասիրություն:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
5. Կանանց մեկամսյակին նվիրված միջոցառում շախմատի մանկապատանեկան դպրոցում:
(զեկուցող՝ Ա. Հայրապետյան)
6. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
7. Քննական առարկաների հետ կապված հարցերի քննարկում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)

***Լսեցին 1.*** Տարրական դասարանների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

***Արտահայտվեցին՝***

***Որոշեցին՝*** Հաստատել 2022-2023 ուսումնական տարվա Տարրական դասարանների մեթոդմիավորման 9-րդ նիստի օրակարգը:

*Լսեցին 2.* Հաղորդում՝ Տարրական դասարանների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց Տարրական դասարանների մեթոդմիավորման նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց, որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ, սահմանված ժամկետներում:

*Արտահայտվեցին՝*

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն Տարրական դասարանների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

*Լսեցին 3.* 2-4-րդ դասարաններում «Մաթեմատիկա» առարկայի դրվածքի ուսումնասիրության արդյունքների ամփոփման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց մեկամսյա դասալսումների արդյունքում կատարած դիտարկումները, ձեռքբերումները և թերի կողմերը: Ելույթի մեջ նշեց, որ բոլոր դասարաններում նկատելի էր աշակերտների ակտիվ մասնակցությունը: Ուսուցիչները բազաբնույթ մեթոդներով դասն ավելի կենդանի ու հագեցած դարձնելու հմտություններով կարողանում էին դասին մասնակից դարձնել բոլոր աշակերտներին: Դրվածքի վերլուծության արդյունքներն ընդհանուր առմամբ գոհացուցիչ են:

*Արտահայտվեցին՝* Տ. Փարսադանյանը, Անուշ Աղաբեկյանը, Ս. Ավանեսյանը

Արտահայտվողները նշեցին, որ կատարված վերլուծությունները, քննարկումները և դիտարկումները արդյունավետ էին այնքանով, որ հաջորդ դասալսումների ժամանակ նկատված վրիպումներն ու թերությունները մեծամասամբ ուղղված էին:

Անուշ Աղաբեկյանը նշեց, որ դասերն անց են կացվել համագործակցային և արդի մեթոդների կիրառմամբ, կատարվել են բազմաբովանդակ աշխատանքներ՝ խմբային, անհատական, որտեղ ակնհայտ էր սովորողների համագործակցելու, քննադատելու հանդուրժողականության կարողություններն ու հմտությունները:

Տ. Փարսադանյանը նշեց, որ աշակերտների մաթեմատիկական գիտելիքները սահուն էր, հստակ, անկաշկանդ կարողանում էին արտահայտել իրենց մտքերը:

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն «Մաթեմատիկա» առարկայի դրվածքի ուսումնասիրության արդյունքների մասին ինֆորմացիան և այն ներկայացնել նաև մանկավարժական խորհրդի նիստում:

*Լսեցին 4.* «Ֆիզկուլտուրա» առարկայի դրվածքի ուսումնասիրության մասին հարցը:

(զեկուցող Ռ. Շալունց)

Զեկուցողը կարևորեց 2-9-րդ դասարաններում «Ֆիզկուլտուրա» առարկայի ուսումնասիրությունը: Նշեց նաև, որ հիմնական դպրոցներում առավել կարևոր նշանակություն ունեն այս առարկաներից գիտելիքներ ունենալը:

*Արտահայտվեցին՝* Ա. Աբգարյանը, Ս. Ավանեսյանը, Ա. Հարությունյանը

Արտահայտվողները նշեցին, որ ֆիզիկական պատշաճ դաստիարակության համար կարևոր է «Ֆիզկուլտուրա» առարկայի պատշաճ ուսուցման ապահովումը և առավել կարևոր է, որ վերոնշյալ առարկայի ուսուցումն իրականացվի առավելապես գործնական աշխատանքների զարգացման հիման վրա, որը կօգնի աշակերտների մոտ զարգացնել համապատասխան հմտություններ և կարողություններ:

Ա. Հարությունյանը նշեց, որ հաշվի առնելով «Ֆիզկուլտուրա» առարկայի ուսուցչուհի Աննա Աբգարյանի անձնվեր աշխատանքը, այս տարի ևս ակնկալում ենք, որ համադպրոցական, մարզային և հանրապետական փուլերում կրկին կունենանք հաղթական տեղեր:
Աբգարյանը նշեց, որ մարտ ամսվա վերջում նախատեսել է II դասարանների միջև կազմակերպել սպորտլանդիա՝ նվիրված 44-օրյա պատերազմում զոհված դպրոցի սաների հիշատակին:

*Որոշեցին՝* Հաջորդիվ ժամանակահատվածում «Ֆիզկուլտուրա» առարկայից իրականացնել դրվածքի ուսումնասիրություն և արդյունքները քննարկել ՄՄ և մանկավարժական խորհուրդների նիստերում:

*Լսեցին 5.* Կանանց մեկամսյակին նվիրված շախմատի միջոցառումների մասին հարցը:
(զեկուցող՝ Ա. Հայրապետյան)
Զեկուցողը նշեց, որ մարտի 27-31-ը Գորիսի մանկապատանեկան դպրոցում կանանց մեկամսյակին նվիրված միջոցառմանը կմասնակցեն նաև Գորիսի Յուրի Բախշյանի անվան թիվ 3 դպրոցի աղջիկներից:

*Արտահայտվեցին՝* Ռ. Շալունցը
Շալունցն առաջարկեց մեկամսյակին նվիրված միջոցառման մասնակիցների հետ լրացուցիչ աշխատանք տանել, լավ արդյունքներ ապահովելու համար:

*Որոշեցին՝* Շախմատի կանանց մեկամսյակին նվիրված միջոցառման մասնակիցների հետ լրացուցիչ աշխատանք տանել, լավ արդյունքներ ապահովելու համար:

*Լսեցին 6.* Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
Զեկուցողը ներկայացրեց էլեկտրոնային մատյանարդեն արձանագրված թերություններն ու անհամապատասխանությունները: Նշեց, որ մինչև մարտ ամիսը որոշ ուսուցիչների մոտ մատյաններում արձանագրվել են թերություններ, մասնավորապես, թեմաները չեն լրացվել կամ ՕԹՊ-ին համապատասխան չեն լրացվել, հավելեց, որ դրանք անհրաժեշտ սեղմ ժամկետում վերացնել:

*Արտահայտվեցին՝* Ռ. Շալունցը
Արտահայտվողը նշեց, որ պետք է վերահսկել ուսուցիչների ամենօրյա կատարվող աշխատանքները կապված մատենավարության հետ, որպեսզի խուսափենք հետագա խնդիրներից: Ժամանակին աջակցել ուսուցիչներին, կատարել համապատասխան դիտողություններ և հիշեցումներ մատենավարության վարման կարգի վերաբերյալ: Շալունցը նշեց, որ արդեն արձանագրվելեն խնդիրներ կապված գրանցումների և ՕԹՊ-ների անհամապատասխանության հետ:

*Որոշեցին՝* Ստուգման արդյունքներն ընդունել ի գիտություն: ՄՄ նախագահի կողմից կատարել էլեկտրոնային մատենավարության պարտադիր կատարողականի վերահսկում, հարցերը քննարկել ուսումնական գծով փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանի հետ:

*Լսեցին 7.* Քննական առարկաների հետ կապված հարցերի քննարկման մասին հարցը:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
Զեկուցողը կարևորեց, որ ժամանակին մեկնարկեն Տարրական դասարանների մեթոդմիավորումում ընդգրկված «Մաթեմատիկա» և «Մայրենի» առարկաների քննական տոմսերի կազմման աշխատանքները, որոնք պետք է լինեն չափորոշչային պահանջներին ու ԳԹԿ-ի կողմից սահմանված պահանջներին համապատասխան: Զեկուցողը նշեց նաև, որ առաջիկայում հաստատվելու են քննական առարկաների խորհրդատվությունների ժամանակացույցերը:

*Արտահայտվեցին՝* Ս. Ավանեսյանը, Կ. Պողոսյանը

Արտահայտվողները նշեցին, որ անհրաժեշտ է բավարար ժամանակ հատկացնել տարեվերջյան կրկնություններին և թեմաների ամփոփումներին, ինչը կնպաստի ավարտական քննությունները սահմանված կարգով, պատշաճ մակարդակով անցկացնելուն:

***Որոշեցին՝*** Կազմել 4-րդ դասարանների գիտելիքների հարցաշարերը, հարցատոմսերը, հավանության արժանացնել ՄՄ նիստում և ներկայացնել տնօրենին՝ հաստատման:

Մ/Մ նախագահ՝ _____ Ռ. Շալունց

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ _____ Ս. Ավանեսյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 10

«20» ապրիլի 2023թ. ք. Գորիս

**Նիստին ներկա էին «Տարրական դասարանների մեթոդմիավորման» բոլոր անդամները.**

1. Շալունց Ռիտա (ՄՄ նախագահ)
2. Դոլունց Արուս
3. Գալստյան Նունե
4. Աղաբեկյան Անուշ
5. Մալխասյան Կարինե
6. Ավագյան Գայանե
7. Գրիգորյան Վարդ
8. Միքայելյան Ալինա
9. Փարսադանյան Տաթևիկ
10. Աղաբեկյան Անահիտ
11. Հարությունյան Արմինե
12. Ջավահիրյան Իրինա
13. Պողոսյա Կարինե
14. Աբգարյան Աննա
15. Տոռոզյան Արփինե
16. Միրզոյան Սոնա
17. Հայրապետյան Ալեքսանդր

**Նիստին ներկա էր ուսումնական գծով փոխտնօրեն Ս. Ավանեսյանը:**

## Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Տարրական դասարանների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
2. Հաղորդում Տարրական դասարանների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
3. Գրաճանաչության ստուգում I դասարաններում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց, դասվարներ)
4. 2-4-րդ դասարաններում «Ֆիզկուլտուրա» առարկայի դրվածքի ուսումնասիրության արդյունքների ամփոփում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
5. 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքների անցկացում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
6. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց

***Լսեցին 1.*** Տարրական դասարանների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

***Արտահայտվեցին՝***

***Որոշեցին՝*** Հաստատել 2022-2023 ուսումնական տարվա Տարրական դասարանների մեթոդմիավորման 10-րդ նիստի օրակարգը:

*Լսեցին 2.* Հաղորդում՝ Տարրական դասարանների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին։

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց Տարրական դասարանների մեթոդմիավորման նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց,որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ, սահմանված ժամկետներում։

*Արտահայտվեցին՝*

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն Տարրական դասարանների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը։

*Լսեցին 3.* I դասարաններում գրաճանաչության ստուգման մասին հարցը։

(զեկուցող՝ Ռ. Շալունց, դասվարներ)

Զեկուցող Ռ. Շալունցը նշեց, որ 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ընթացքում դպրոցի 1-ին դասարաններում իրականացվել է գրաճանաչության ստուգում, որի ընթացքում որոշակի չափով անդրադարձ է կատարվել նաև աշակերտների ընթերցանությանը։ Ստուգման արդյունքներով պարզ է դարձել, որ աշակերտները գրաճանաչ են, կարողանում են ընթերցել, միևնույն ժամանակ նկատելի էին նաև որոշակի խնդիրներ կապված լեզվական խնդիրներ ունեցող աշակերտների հետ, որոնց հետ աշխատանքներն իրականացվում են ուսուցչի օգնականների հետ համագործակցությամբ՝ դիտարկման թերթիկներում արձանագրված խնդիրների լուծման և դրանցում սահմանված վերջնարդյունքների հասնելու ուղղությամբ, ինչպես նաև ԿԱՊԿՈՒ աշակերտների դեպքում՝ ԱՈՒՊ-ներով։

*Արտահայտվեցին՝* Ն. Գալստյանը, Ա. Աղաբեկյանը, Կ. Մալխասյանը

Առաջին դասարաններում դասավանդող դասվարները ներկայացրեցին աշակարտների ձեռքբերումները ուստարվա ընթացքում։

I Ա դասարանի դասվար Ն. Գալստյանը իր ելույթի մեջ նշեց, որ աշակերտների մեջ կան լեզվական խնդիրներ ունեցող երեք աշակերտ, մեկ աշակերտ՝ Սարգսյան Մայքլ Արայի, ունի որոշակի խնդիրներ, ուսուցումն անց է կացվում ԱՈՒՊ-ով։

I Բ դասարանի դասվար Ա. Աղաբեկյանը նշեց, որ 28 աշակերտներն էլ գրաճանաչ են և յուրացրել են չափորոշչով նախատեսված բոլոր պահանջները։

I Գ դասարանի դասվար Կ. Մալխասյանը իր ելույթում մանրամասն ներկայացրեց 34 աշակերտների ձեռբերումները, ասաց որ նկատելի խոչնդոտներ չկան, բոլոր աշակերտները տառաճանաչ են։

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ընթացքում դպրոցի I դասարաններում գրաճանաչության ստուգման մասին զեկուցումը։

*Լսեցին 4.* 2-4-րդ դասարաններում «Ֆիզկուլտուրա» առարկայի դրվածքի ուսումնասիրության արդյունքների ամփոփման մասին հարցը։

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը նշեց, որ դասալսումներ իրականացվել են ամբողջ ամսվա ընթացքում։ «Ֆիզկուլտուրա» առարկան դպրոցում դասավանդվում է ըստ չափորոշչային պահանջների։ Դասալսումների և կազմակերպված բաց դասերի ընթացքում տեսանելի էին աշակերտների ունեցած գիտելիքները «Ֆիզկուլտուրա» առարկայից։ Նրանք տիրապետում էին խաղային կանոններին, նորմատիվային պահանջներին։ Այս ամենի վկայությունը դպրոցի ունեցած հաջողություններն են տարբեր մրցումների, սպորտլանդիաների մասնակցության ժամանակ, հաղթանակներ ունեցանք ոչ

միայն մեր մարզում, այլ նաև մյուս մարզերում տարբեր մարզական միջոցառումների մասնակցության ընթացքում:

*Արտահայտվեցին՝* Ա. Աբգարյանը, Ս. Ավանեսյանը

Աննա Աբգարյանը իր ելույթում ներկայացրեց կատարած աշխատանքները.

- 27.03.2023թ. Ներդպրոցակ սպորտլանդիա՝ նվիրված 44-օրյա պատերազմում զոհված շրջանավարտների հիշատակին՝ երկրորդ դասարանցիների միջև:
- 30.03.2023թ «Սպորտլանդիա 2023» համայնքային փուլ՝ 1-3-րդ դասարանների միջև, գրավել են 1-ին տեղը:
- 31.03.2023թ-ին դպրոցի թիմը մասնակցել է 4-6րդ դասարանների միջև «Սպորտլանդիա 2023» համայնքային փուլին՝ գրավելով 1-ին տեղ,
- ՀՀՖ-ի կողմից կազմակերպված մինչև 12 տարեկան աղջիկների ֆուտբոլում համայնքային փուլում գրավել են 1-ին տեղ:
- 20.04.2023թ-ին դպրոցի թիմը մասնակցել է 1-3-րդ դասարանների միջև «Սպորտլանդիա 2023» մարզային փուլ՝ գրավելով 2-րդ տեղ,
- 21.04.2023թ դպրոցի թիմը մասնակցել է 4-6րդ դասարանների միջև «Սպորտլանդիա 2023» համայնքային փուլին՝ գրավելով 6-րդ տեղ:

Սերգեյ Ավանեսյանը կարևորեց «Ֆիզկուլտուրա» առարկայի դասավանդումը և աշակերտների մասնակցությունը համայնքային, մարզային և միջմարզային միջոցառումներին ու մրցաշարերին:

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն «Ֆիզկուլտուրա» առարկայի դրվածքի ուսումնասիրության արդյունքների մասին ինֆորմացիան և այն ներկայացնել նաև մանկավարժական խորհրդի նիստում:

*Լսեցին 5.* 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքների անցկացման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը նշեց, որ ուսումնական գծով փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանի և «Մայրենի», «Մաթեմատիկա» առարկաների ուսուցիչների հետ քննարկման արդյունքում նախընտրելի է համարվել թելադրության տեսքով տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքները: Գրավոր աշխատանքների ժամանակ փոխտնօրենի կողմից ներկայացվելու են թելադրության մի քանի տարբերակներ, որոնցից մեկն ընտրվելու է որպես 2-րդ կիսամյակի գրավոր աշխատանք: Իսկ «Մաթեմատիկա» առարկայից աշակերտներին կտրվեն գրավոր աշխատանքներ, որոնց մի մասը կլինի թեստային տարբերակով:

*Արտահայտվեցին՝* Ա.Աղաբեկյանը, Տ. Փարսադանյանը, Ս. Ավանեսյանը:

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ անհրաժեշտ է համարում նախապատրաստական աշխատանքների արդյունքում կիրառել այնպիսի մեթոդներ ու հնարներ, որ ապահովվի անկողմնակալ վերաբերմունքը, օրինակ՝ կիրառել նախորդ փորձը և գրավորների ժամանակ օգտագործել ծածկագրեր:

Արտահայտվողները նշեցին նաև այն մասին, որ թելադրությունը գիտելիքների ստուգման լավագույն ձևն է հիմնական դպրոցում, քանի որ ընդգրկում է ուղղագրություն, կետադրություն, տողադարձ և այլ ենթաբաժիններ:

*Որոշեցին՝* Հաշվի առնելով նաև ուսուցիչների կողմից կատարված առաջարկությունները որոշեցին՝ բոլոր դասարաններում «Մայրենի» առարկայից տալ թեմատիկ գրավոր աշխատանք՝ թելադրության տեսքով, նախապես ուսումնական մասի ղեկավարի և մեթոդմիավորման նախագահի հետ միասին ընտրել թելադրության մի քանի տարբերակ, որոնցից էլ պատահականության սկզբունքով առանձնացնել մեկը: «Մաթեմատիկա» առարկայից տալ գրավոր աշխատանքն, որն իր մեջ կներառի նաև թեստային մաս:

*Լսեցին 6.* Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց էլեկտրոնային մատյաններում արդեն իսկ արձանագրված թերություններն ու անհամապատասխանությունները: Նշեց, որ մինչև մարտ ամիսը որոշ ուսուցիչների մոտ մատյաններում արձանագրվել են թերություններ, մասնավորապես, թեմաները չեն լրացվել կամ ՕԹՊ-ին համապատասխան չեն լրացվել, հավելեց, որ դրանք անհրաժեշտ սեղմ ժամկետում վերացնել: Զեկուցողը նշեց նաև յուրաքանչյուր դասարանի բոլոր ուսուցիչների թույլ տված թերությունները, առաջարկեց, որ յուրաքանչյուր դասվար հետևողականորեն ստուգի իր դասարանում պարապող ուսուցիչների աշխատանքը:

***Արտահայտվեցին՝*** Ս. Ավանեսյան:

Արտահայտվողը նշել, որ անհրաժեշտ է հետևել տրված ցուցումներին և գրանցումներն ու գնահատումը կատարել ժամանակին:

***Որոշեցին՝*** Ստուգման արդյունքներն ընդունել ի գիտություն: ՄՄ նախագահի կողմից կատարել էլեկտրոնային մատենավարության պարտադիր կատարողականի վերահսկում, հարցերը քննարկել ուսումնական գծով փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանի հետ:

ՄՄ նախագահ՝ _____ Ռ. Շալունց

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ _____ Ս. Ավանեսյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 11

«08» մայիսի 2023թ. ք. Գորիս

<u>Նիստին ներկա էին «Տարրական դասարանների մեթոդմիավորման» բոլոր անդամները.</u>

1. Շալունց Ռիտա (ՄՄ նախագահ)
2. Դոլունց Արուս
3. Գալստյան Նունե
4. Աղաբեկյան Անուշ
5. Մալխասյան Կարինե
6. Ավագյան Գայանե
7. Գրիգորյան Վարդ
8. Միքայելյան Ալինա
9. Փարսադանյան Տաթևիկ
10. Աղաբեկյան Անահիտ
11. Հարությունյան Արմինե
12. Ջավահիրյան Իրինա
13. Պողոսյա Կարինե
14. Աբգարյան Աննա
15. Տոռոզյան Արփինե
16. Միրզոյան Սոնա
17. Հայրապետյան Ալեքսանդր

**Նիստին ներկա էր փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանը, ՄԿԱ գծով փոխտնօրեն Արմիդա Գևորգյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը, ԴԱԿ Արաքսյա Առստամյանը**

## Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
2. Հաղորդում՝ «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ռ. Շալունց )
3. 4-րդ դասարանների գիտելիքների ստուգման հանձնաժողովների կազմի քննարկում և հաստատում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
4. 4-րդ դասարանների գիտելիքների ստուգման քննական տոմսերի, քննությունների ժամանակացույցի քննարկում և հաստատում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց )
5. 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի տնօրենության կողմից տրված գրավոր աշխատանքների արդյունքների քննարկում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
6. Լավագույն ձեռագրերի մրցույթի անցկացման մասին:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
7. 120-200 դասաժամ բացակայություն ունեցող աշակերտի հարցը:
(զեկուցող՝ Ռ. Շալունց )
8. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Ռ Շալունց)
9. ԿԱՊԿՈՒ աշակերտներին 4-րդ դասարանների գիտելիքների ստուգումից ազատել:
(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

*Լսեցին 1.* «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

*Արտահայտվեցին՝*

*Որոշեցին՝* Հաստատել 2022-2023 ուսումնական տարվա Տարրական դասարանների մեթոդմիավորման 11-րդ նիստի օրակարգը:

*Լսեցին 2.* Հաղորդում՝ «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց, որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ, սահմանված ժամկետներում:

*Արտահայտվեցին՝*

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

*Լսեցին 3.* 4-րդ դասարանների գիտելիքների ստուգման հանձնաժողովների կազմի քննարկման և հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը ներկայացրեց 4-րդ դասարանների գիտելիքների ստուգման հանձնաժողովների կազմերը, նշեց, որ կազմի անդամներն ընտրվել են հիմք ընդունելով հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգը:

*Արտահայտվեցին՝*

*Որոշեցին՝*

1. Գիտելիքների ստուգումը կազմակերպելու համար տնօրենի կողմից ներկայացուցիչներ նշանակել տնօրեն Դավիթ Կոստանդյանին, փոխտնօրեններ Սերգեյ Ավանեսյանին ու Արմիդա Գևորգյանին:
2. Հաստատել 4-րդ դասարանների գիտելիքների ստուգման հանձնաժողովների կազմերը (կցվում է):

*Լսեցին 4.* 4-րդ դասարանի աշակերտների գիտելիքների ստուգման հարցատոմսերի քննարկման, հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը նշեց, որ «Մայրենի» առարկայի թեստը պարունակում է տասը առաջադրանք, յուրաքանչյուր առաջադրանքի և ենթաառաջադրանքի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր: Թեստի առավելագույն միավորը 15 է, թեստի կատարմանը հատկացվում է 60 րոպե: «Մաթեմատիկա» առարկայի թեստը կազմված է տասնյոթ առաջադրանքից: 1-ից 15 առաջադրանքներին տրվում է 1 միավոր, 16-րդ առաջադրանքին՝ 2 միավոր, 17-րդ առաջադրանքին՝ 3 միավոր: Թեստի առավելագույն միավորը 20 է: Թեստի կատարմանը հատկացվում է 60 րոպե: Զեկուցողը հավելեց, որ տարրական դասարանների մեթոդմիավորումը հիմք ընդունելով ԳԹԿ-ի կողմից մշակված նմուշները՝ կազմել է առնվազն չորս տարբերակ «Մայրենի» և «Մաթեմատիկա» առարկաներից:

*Արտահայտվեցին՝* Ս. Ավանեսյանը

Արտահայտվողը հավանություն տվեց 4-րդ դասարանի աշակերտների «Մայրենի» և «Մաթեմատիկա» առարկաներից գիտելիքների ստուգման հարցատոմսերին:

*Որոշեցին՝* Հաստատել 4-րդ դասարանի աշակերտների գիտելիքների ստուգման հարցատոմսերը (կցվում է):

*Լսեցին 5.* 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի տնօրենության կողմից տրված գրավոր աշխատանքների արդյունքների քննարկման մասին հարցը:

(զեկուցող Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ընթացքում «Մայրենի», «Մաթեմատիկա» առարկայից տնօրենության կողմից գրավոր աշխատանք են գրել 1-4-րդ դասարանների բոլոր աշակերտները. «Մայրենի» առարկայից տրվել է թելադրություն՝ առաջադրանքներով, իսկ «Մաթեմատիկա» առարկայից թեստային աշխատանք: Ինչպես նախորդ ուսումնական տարվա ընթացքում և ընթացիկ ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում, 2-րդ կիսամյակի տնօրենության կողմից գրավորները նույնպես տրվել են կոդավորված տարբերակով, ինչը ստուգման ընթացքում ապահովել է անկողմնակալությունը:

Զեկուցողը հայտնեց նաև տնօրենության կողմից տրված գրավոր աշխատանքների արդյունքները, մասնավորապես կանգ առավ տեղ գտած ակնառու թերությունների վրա, առաջարկեց ուշադրություն դարձնել ուղղագրության, կետադրության վրա:

*Արտահայտվեցին՝* Գ. Ավագյանը, Վ. Գրիգորյանը, Ռ Շալունցը

Արտահայտվողները անհրաժեշտ համարեցին՝ բոլոր դասարաններում, որքան հնարավոր է, սովորողներին իրազեկել մայրենի լեզվի կարևորության և գրագիտության իմացության անհրաժեշտության մասին: Ավագյանը նշեց, որ անհրաժեշտ է լինել խիստ և բացահայտել գիտելիքների իրական պատկերը:

Գրիգորյանը նշեց, որաշակերտները շատ հաճախ տնօրենության կողմից գրավոր աշխատանքների ժամանակ լարվում են և թույլ են տալիս այնպիսի սխալներ, որոնք առօրյա աշխատանքներում թույլ չեն տալիս:

Շալունցը նշեց, որ անհրաժեշտ է ուսուցողական և թեմատիկ գրավոր աշխատանքներն անցկացնել չափորոշչահեն ուսուցման սկզբունքներով, տնօրինության կողմից տրվող աշխատանքների նմանությամբ, որը թույլ կտա աշակերտներին ավելի հեշտությամբ ր առանց լարվածության մասնակցել գրավոր աշխատանքին:

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի տնօրենության կողմից տրված գրավոր աշխատանքների արդյունքները և աշխատանքները կազմակերպել այնպես, որպեսզի ունեցած թերությունները շտկվեն (կցվում է ամփոփագիրը):

*Լսեցին 6.* Լավագույն ձեռագրերի մրցույթի անցկացման մասին հարցը:

(զեկուցող Ս. Ավանեսյան)

Ավանեսյանը նշեց, որ մրցույթը անց է կացվելու 3 խմբերի միջև. 1-ին դասարանների, 2-5-րդ դասարանների և 6-9-րդ դասարանների միջև: Նախապես դասվարների և ուսուցիչների կողմից ընտրված աշակերտների տետրերից անհրաժեշտ է ընտրել լավագույնները և ներկայացնել ժյուրիի դատին:

*Արտահայտվեցին՝* Ա. Առուստամյանը

ԴԱԿ Ա. Առուստամյանը ասաց, որ ինքը համագործակցելով ուսուցիչների հետ կընտրի մրցույթի մասնակիցներին:

*Որոշեցին՝* Մրցույթը անցկացնել մինչև մայիսի 14-ը և ամփոփել մայիսի 15-ին:

*Լսեցին 7.* 120-200 դասաժամ բացակայություն ունեցող աշակերտի հարցը:

(զեկուցող՝ Ռ Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց 120-200 դասաժամ բացականեր ունեցող աշակերտների հետ կապված կարգը: Նշեց, որ տարրական դասարաններում չկան 120 և ավելի ժամ բացակայություն ունեցող աշակերտներ և որ բոլոր բացակայությունների պատճառները ծնողների հետ պարզաբանվել են:

*Արտահայտվեցին՝* Դասվարները նշեցին, որ տարրական դասարաններում անհարկի բացակայություններ չեն լինում, բացակայում են բացառապես հիվանդության կամ շատ կարևոր պատճառով:

*Որոշեցին՝* Լինել հետևողական բացակայող աշակերտների նկատմամբ և ծնողների հետ վերահսկել բացակայության պատճառը:

*Լսեցին 8.* Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց մատենավարության հետ կապված ընթացիկ թերությունները, շեշտելով, որ որոշ ուսուցիչների մոտ դիտարկվում է գնահատականների սակավություն, խնդրեց, որ ժամանակին կատարեն գրանցումները, գնահատումները:

*Արտահայտվեցին՝* Ս.Ավանեսյանը:

Ավանեսյանը նշեց, որ արդեն իսկ որոշ ուսուցիչների մոտ արձանագրվել են մատենավորության հետ կապված խնդիրներ: Հորդորեց լինել ավելի ուշադիր և սահմանված աշխատանքները կատարել ժամանակին ու պատշաճ, ինչպես նաև մեթոդմիավորման նախագահին հանձնարարեց ստուգումներ իրականացնել և դրանց ամփոփ տվյալները ներկայացնել ուսումնական մաս:

*Որոշեցին՝* Մեթոդմիավորման նախագահի կողմից իրականացնել էլեկտրոնային մատյանների ամենշաբաթյա ստուգումներ, դրանց արդյունքներով ի հայտ եկած խնդիրները ներկայացնել ուսումնական գծով փոխտնօրեն Ս. Ավանեսյանին:

*Լսեցին՝9.* ԿԱՊԿՈՒ աշակերտներին 4-րդ դասարանների գիտելիքների ստուգումից ազատելու մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը նշեց, որ 2022-2023 ուսումնական տարում 4-րդ դասարաններում ԿԱՊԿՈՒ աշակերտներ չեն սովորում:

*Արտահայտվեցին՝*

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն 2022-2023 ուսումնական տարում 4-րդ դասարաններում ԿԱՊԿՈՒ աշակերտներ չսովորելու մասին զեկուցումը:

Մ/Մ նախագահ՝ _____ Ռ. Շալունց

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ _____ Ս. Ավանեսյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 12

«16» հունիսի 2023թ. ք. Գորիս

<u>Նիստին ներկա էին «Տարրական դասարանների մեթոդմիավորման» բոլոր անդամները.</u>

1. Շալունց Ռիտա (ՄՄ նախագահ)
2. Դոլունց Արուս
3. Գալստյան Նունե
4. Աղաբեկյան Անուշ
5. Մալխասյան Կարինե
6. Ավագյան Գայանե
7. Գրիգորյան Վարդ
8. Միքայելյան Ալինա
9. Փարսադանյան Տաթևիկ
10. Աղաբեկյան Անահիտ
11. Հարությունյան Արմինե
12. Ջավահիրյան Իրինա
13. Պողոսյա Կարինե
14. Աբգարյան Աննա
15. Տոռոզյան Արփինե
16. Միրզոյան Սոնա
17. Հայրապետյան Ալեքսանդր

**Նիստին ներկա էր փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանը, ՄԿԱ գծով փոխտնօրեն Արմիդա Գևորգյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը, տարրական դպրոցի մակարդակում իրականացվող խմբակների ղեկավարներ**

## Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
2. Հաղորդում՝ «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
3. 4-րդ դասարանների գիտելիքների ստուգման արդյունքների ամփոփում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
4. Էլեկտրոնային մատենավարության ամփոփիչ ստուգման արդյունքների քննարկում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
5. 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում իրականացված միջոցառումների, բաց դասերի, բաց դաս-միջոցառումների կատարողականի քննարկում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
6. 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում արտադասարանական խմբակների կատարողականների քննարկում:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան, խմբավարներ)
7. 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում իրականացված աշխատանքների հաշվետվությունների քննարկում:
(զեկուցողներ՝ ՄՄ անդամներ, Ա. Ծատրյան)
8. 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում իրականացված դասալսումների ամփոփում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
9. Մեթոդմիավորման կազմի փոփոխություն:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

10. ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունքներն ու խնդիրները:

(զեկուցողներ՝ Ս. Ավանեսյան, Ա. Ծատրյան)

11. 2023-2024 ուսումնական տարում 2-րդ դասարաններում ուսուցումը նոր չափորոշիչներով է իրականացվելու:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

12. 2023-2024 ուսումնական տարվա նախնական դասաբաշխում:

(զեկուցողներ՝ Ս. Ավանեսյան, Ռ. Շալունց)

***Լսեցին 1.*** «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

***Արտահայտվեցին՝***

***Որոշեցին՝*** Հաստատել 2022-2023 ուսումնական տարվա Տարրական դասարանների մեթոդմիավորման 12-րդ նիստի օրակարգը:

***Լսեցին 2.*** Հաղորդում՝ «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց, որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ, սահմանված ժամկետներում:

***Արտահայտվեցին՝***

***Որոշեցին՝*** Ընդունել ի գիտություն «Տարրական դասարանների մեթոդմիավորման» նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

***Լսեցին 3.*** 4-րդ դասարանների գիտելիքների ստուգման արդյունքների ամփոփման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը ներկայացրեց 4-րդ դասարանների գիտելիքների ստուգման ամփոփ նկարագիրը, նշեց, որ հունիսի 8-ին «Մայրենի» և հունիսի 13-ին «Մաթեմատիկա» առարկաներից իրականացվել է գիտելիքների ստուգում 4-րդ «Ա», «Բ» և «Գ» դասարաններում: Գիտելիքների ստուգմանը մասնակցել են տվյալ դասարանների բոլոր աշակերտները: Զեկուցողը հավելեց, որ արդյունքները գոհացուցիչ են: Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ 2023-2024 ուսումնական տարվանից կփոխվի նաև 4-րդ դասարանն ավարտողների գիտելիքների ստուգման գործընթացը, այն նույնպես կկազմակերպվի կոդավորված տարբերակով:

***Արտահայտվեցին՝*** Կ. Պողոսյանը, Ա. Դոլունցը, Ռ. Շալունցը

Արտահայտվողները կարևորեցին բացթողումների արձանագրումը, առաջացած խնդիրների շուրջ քննարկումները: 2023-2024 ուսումնական տարում գիտլիքների ստուգումը բարձր մակարդակով անցկացնելու համար պետք է միջոցներ ձեռնարկել աշակերտների պատրաստվածության մակարդակը բարձրացնելու, ստրեսակայունություն ձևավորելու ուղղությամբ:

***Որոշեցին՝*** Ընդունել ի գիտություն 4-րդ դասարանների գիտելիքների ստուգման արդյունքների ամփոփման մասին զեկուցումը (կցվում է ամփոփագիրը):

***Լսեցին 4.*** Էլեկտրոնային մատենավարության ամփոփիչ ստուգման արդյունքների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը նշեց, որ երկու կիսամյակների ընթացքում կատարված ստուգումները, ամենշաբաթյա վերահսկողությունը, փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանի կողմից աջակցությունը, քննարկումները և հարցերի պարզաբանումները փոփոխություններ են արձանագրել էլեկտրոնային մատենավարության հարցում:

*Արտահայտվեցին՝* Ս. Ավանեսյանը

Որոշակի խնդիրներ կարելի է ասել հաղթահարվեցին՝ գրանցումներն ու գնահատումները կատարվեցին թեթևակի շեղումներով: Սակայն, որոշ շարունակում եմ թերություններով աշխատել, որոնք հիմնականում կապված են թեմաների ուշ լրացման, հաստատված ՕԹՊ-ներից որոշակի շեղումների հետ, սակայն շեշտեց, որ ի տարբերություն 2021-2022 ուսումնական տարվա և 2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի, 2-րդ կիսամյակում արձանագրված թերություններն ու բացթողումները համեմատաբար քիչ են:

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն 2022-2023 ուսումնական տարվա էլեկտրոնային մատենավարության վարման արդյունքները և այն համարել բավարար:

*Լսեցին 5.* 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում իրականացված միջոցառումների, բաց դասերի, բաց դաս-միջոցառումների կատարողականի քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում հումանիտար առարկաների մասնախմբի ուսուցիչների կողմից կազմակերպված բաց դասերի, բաց դաս-միջոցառումների ամփոփ կատարողականը: Նշեց, որ կազմակերպված դասերն ու միջոցառումները ուսուցանող էին, երեխաները կատարում էին վերլուծություններ:

Զեկուցողը ներկայացրեց միջոցառումների, բաց դասերի, բաց դաս-միջոցառումների կատարողականը:

*Արտահայտվեցին՝* Ս. Ավանեսյանը

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ ցուցադրական դասերը պետք է լինեն ծրագրավորված, ուսուցիչը պետք է հաշվի առնի դասի ընթացքի հնարավոր տարբերակները, բայց ոչ երբեք նույն դասը արդեն նախապես անցկացրած լինի և դա բազում փորձերի վրա հիմնված դաս-շոուի վերածվի: Նշեց, որ պետք է հետևել հաստատված նվազագույն պահանջներին և համապատասխան այդ ցանկի ապահովել բաց դասերի, դաս միջոցառումների կատարողականը:

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում իրականացված միջոցառումների, բաց դասերի, բաց դաս-միջոցառումների մասին զեկուցումը (կցվում է):

*Լսեցին 6.* 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում իրականացված արտադասարանական խմբակների կատարողականների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Գևորգյան, խմբավարներ)

Ա. Գևորգյանը նշեց, որ 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում իրականացված արտադասարանական խմբակների աշխատանքից հիմնականում գոհ է, սակայն նշեց, որ եղել են դեպքեր, երբ որոշ խմբավարներ խմբակները սահմանված օրերում չեն իրականացրել: Գևորգյանն անդրադարձավ նաև խմբակների մատենավարությանը, նշեց, որ և՛ ընթացքում, և՛ ամփոփման ժամանակ արձանագրվել են թերություններ, հավելեց, որ Տարրական դասարանների մեթոդմիավորումում հիմնականում խմբակներ ունեն ուսուցչի օգնականները, ինչպես նաև նկարչության ուսուցչուհի Սոնա Միրզոյանը:

Խմբավարներն առանձին-առանձին ներկայացրեցին 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում իրենց կողմից իրականացված աշխատանքները՝ հաշվետվությունների տեսքով:

*Արտահայտվեցին՝* Ս. Ավանեսյան

Ս. Ավանեսյանը կարևորեց խմբակների գործունեության արդյունքները, ինչպես նաև շեշտեց, որ անհրաժեշտ է վերլուծել խմբակների գործունեությունը, դուրս բերել խնդիրները և հաջորդ ուսումնական տարիներին աշխատել այնպես, որ այդ խնդիրներն այլևս չկրկնվեն: Ավանեսյանն առանձնացրեց նաև այս տարի հայ-լեհական նկարչության մրցույթում դպրոցի գրանցած արդյունքները և կարծիք հայտնեց, որ մրցույթում դպրոցի աշակերտների մեծ թվի մասնակցությանը նպաստել է նաև նկարչության խմբակը:

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում իրականացված արտադասարանական խմբակների կատարողականների մասին զեկուցումը:

*Լսեցին 7.* 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում իրականացված աշխատանքների հաշվետվությունների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ ՄՄ անդամներ, Ա. Ծատրյան)

Մեթոդմիան նախագահը ներկայացրեց 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում կատարված աշխատանքները, արձանագրված հաջողություններն ու բացթողումները, ինչպես նաև ուսումնական տարվա սկզբում հաստատված ժամանակացույցին համապատասխան իրականացված և չիրականացված աշխատանքները:

Մեթոդմիավորման անդամները ներկայացրին իրենց հաշվետվությունները, ուսումնական տարվա ընթացքում իրենց կողմից իրականացված աշխատանքները, ամփոփեցին արդյունքները: Առաջացած խնդիրներն ու հարցերը քննարկվեցին: Ուսուցիչները մանրամասն ներկայացրեցին նաև ԿԱՊԿՈՒ և կանխարգելիչով աշակերտների հետ կատարված աշխատանքները, շեշտեցին, որ 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակից սկսած աշակերտների հետ աշխատել են նաև դիտարկման թերթիկներով, որոնք նույնպես արդյունավետ են:

*Արտահայտվեցին՝* Գ. Ավագյանը, Ա. Աղաբեկյանը, Ի. Ջավահիրյանը

Արտահայտվողները կարևորեցին ծավալված քննարկումները և մեթոդմիավորման նիստում հաշվետվությունների վերլուծությունը: Կարևորվեց նաև ԿԱՊԿՈՒ և կանխարգելիչով աշակերտների հետ կատարված աշխատանքների վերլուծությունը, ուսուցիչ, ուսուցչի օգնական կապը: Նշվեցին տարվա ընթացքում առաջացած խնդիրները կապված ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ, ինչպես նաև շեշտվեց Սերգեյ Ավանեսյանի կողմից մշակված դիտարման թերթիկներով աշխատանքի արդյունավետությունը:

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում մեթոդմիավորման անդամների կողմից իրականացված աշխատանքների հաշվետվությունների մասին զեկուցումը:

*Լսեցին 8.* 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում իրականացված դասալսումների ամփոփման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում իրականացված դասալսումների արդյունքները, կարևորեց քննարկված արձանագրությունների արդյունքները:

Զեկուցողը նշեց նաև հաջողված դասերի մասին: Կարևորվեց նաև դասալսումներին ուսումնական մասի ղեկավար Սերգեյ Ավանեսյանի, ՄԿԱ

գծով փոխտնօրեն Արմիդա Գևորգյանի, մեթոդմիավորման մյուս ուսուցիչների, ինչպես նաև մյուս մեթոդմիավորումների անդամների մասնակցությունը և դրանց արդյունքում ծավալված քննարկումները:

*Արտահայտվեցին՝* Ա. Հարությունյանը

Ա. Հարությունյանը նշեց, որ դասալսումներն ու կազմակերպված քննարկումները օգնում են դասի արդյունավետության բարձրացմանը, թերությունների շտկմանը և փորձի փոխանակմանը:

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում իրականացված դասալսումների արդյունքների ամփոփման մասին զեկուցումը (կցվում է ամփոփագիրը):

*Լսեցին 9.* Մեթոդմիավորման կազմի փոփոխության մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ 2023-2024 ուսումնական տարվանից նպատակահարմար է Տարրական դասարանների մեթոդմիավորման կազմում ընդգրկված «Կերպարվեստ», «Ֆիզկուլտուրա», «Երաժշտություն» առարկաները տեղափոխել Հումանիտար առարկաների մեթոդմիավորման ենթակայության, որպեսզի նոր ՀՊՉ-ների բնագավառների համապատասխան առարկաները բաժանված լինեն բնագավառներին համապատասխան, Տարրական դասարանների մեթոդմիավորումում մնան միայն դասվարների կողմից դասավանդվող առարկաները, ինչպես նաև վերոնշյալ առարկաների ուսուցիչների աշխատանքները կազմակերպվեն համակարգված և ղեկավարվեն 1 մեթոդմիավորման նախագահի կողմից:

*Արտահայտվեցին՝* ՄՄ անդամները

Արտահայտվողները նշեցին, որ նման մոտեցումը ողջունելի է, հավելեցին, որ նախկինում նույնպես Տարրական դասարանների մեթոդմիավորումում եղել են միայն դասվարները:

*Որոշեցին՝* Տարրական դասարանների մեթոդմիավորման կազմում ընդգրկված «Կերպարվեստ», «Ֆիզկուլտուրա», «Երաժշտություն» առարկաները տեղափոխել Հումանիտար առարկաների մեթոդմիավորման ենթակայության, «Շախմատ», «Թվային գիտություն և համակարգչային գրագիտություն» առարկաները՝ Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորում:

*Լսեցին 10.* ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունքների ու խնդիրների մասին հարցը:

(զեկուցողներ՝ Ս. Ավանեսյան, Ա. Ծատրյան)

Զեկուցողները բոլորի ուշադրությունը հրավիրեցին ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ կատարված աշխատանքների վրա: Ծատրյանը ներկայացրեց երեխաներից որոշների մոտ առաջացած խնդիրները և կատարված աշխատանքները: Քննարկվեցին տարվա ընթացքում արձանագրված ձեռքբերումներն ու բացթողումները: Արփինե Ծատրյանը նշեց, որ ուսուցիչների կողմից պատշաճ լրացվել են ԿԱՊԿՈՒ աշակերտների ԱՈՒՊ-ները, ինչպես նաև ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ընթացքում Ավանեսյանի կողմից մշակված դիտարկման թերթիկներով դպրոցի բոլոր դասարաններում իրականացվել են դիտարկումներ և աշակերտների մոտ խնդիրների առկայության դեպքում ուսուցիչների և ուսուցչի օգնականների հետ համապեղ իրականացվել են համապատասխան աշխատանքներ՝ սահմանված վերջնարդյունքներին հասնելու նպատակով:

*Արտահայտվեցին՝* Ի. Ջավահիրյանը, Ա. Աղաբեկյանը, Կ. Մալխասյանը

Արտահայտվողները կարևորեցին ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ տարվող յուրաքանչյուր աշխատանք, նշեցին, որ այն պետք է լինի շարունակական:

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում ուսուցիչների կողմից իրականացված աշխատանքների մասին զեկուցումը:

*Լսեցին 11.* 2023-2024 ուսումնական տարում 2-րդ դասարաններում ուսուցումը նոր չափորոշիչներով իրականացնելու մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ 2023 թվականի ապրիլի 25-ից Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցում մեկնարկել են «Հանրապետության հանրակրթական դպրոցների 2-րդ, 5-րդ, 7-րդ և 10-րդ դասարանների հանրակրթության պետական չափորոշչի և առարկայական ծրագրերին համապատասխան տնօրենների, փոխտնօրենների ու ուսուցիչների վերապատրաստում և մենթորների կողմից աջակցության իրականացում» դասընթացները, որոնց մասնակցել են նաև դպրոցի մանկավարժները: 2023-2024 ուսումնական տարվանից դպրոցի 2-րդ դասարաններում ուսուցումն իրականացվելու է նոր չափորոշիչներով, հետևաբար անհրաժեշտ է ժամանակին նախապատրաստվել նոր ուսումնական տարվան, հիմք ընդունելով նոր ՀՊՉ-ն ու առարկայական ծրագրերը, կազմել նոր թեմատիկ պլանները, օրացուցային-թեմատիկ պլանները, քանի որ արձակուրդից հետո հաշված օրեր կմնան և այդ ընթացքում դժվար կլինի իրականացնել բոլոր նախատեսվող աշխատանքները:

*Արտահայտվեցին՝* Ռ. Շալունցը

Ռ. Շալունցը նշեց, որ որպես մենթոր պատրաստ է աջակցել մեթոդմիավորման բոլոր անդամներին, ինչպես նաև մյուս մեթոդմիավորումներում ընդգրկված բոլոր ուսուցիչներին նոր չափորոշիչներով աշխատանքները պատշաճ կազմակերպելու ուղղությամբ:

*Որոշեցին՝* 2023-2024 ուսումնական տարվանն ընդառաջ սկսել թեմատիկ պլանների և օրացուցային-թեմատիկ պլանների մշակման, ինչպես նաև թեմատիկ գրավորների աշխատանքները:

*Լսեցին 12.* 2023-2024 ուսումնական տարվա նախնական դասաբաշխման մասին հարցը:

(զեկուցողներ՝ Ռ. Շալունց , Ս. Ավանեսյան)

Զեկուցող Սերգեյ Ավանեսյանը հանգամանալից ներկայացրեց այն բոլոր փոփոխությունները որոնք սպասվում են նոր ուսումնական տարում՝ կապված նոր չափորոշչային պահանջների հետ:

Զեկուցող Ռիտա Շալունց նշեց, որ 2023-2024 ուսումնական տարում 1-ին, 3-րդ և 4-րդ դասարաններում նախնական դասաբաշխումը պետք է իրականացվի հին չափորոշիչներով, իսկ 2-րդ դասարաններում՝ նոր չափորոշիչներով, համապատասխան որի որոշ առարկաների ժամաքանակի մեջ տեղի են ունեցել փոփոխություններ: Ռիտա Շալունցը նշեց նաև, որ որպես մենթոր պատրաստ է աջակցել մեթոդմիավորման բոլոր անդամներին, ինչպես նաև մյուս մեթոդմիավորումներում ընդգրկված բոլոր ուսուցիչներին նոր չափորոշիչներով աշխատանքները պատշաճ կազմակերպելու ուղղությամբ:

*Արտահայտվեցին՝* Ա. Միքայելյանը

Ալինա Միքայելյանը նշեց, որ անհրաժեշտ է հաշվի առնել 2-րդ դասարաններում սպասվող փոփոխությունները՝ կապված տարրական դասարանների մեթոդմիավորման և մյուս մեթոդմիավորումներում ընդգրկված առարկաների առարկայական փոփոխությունների հետ:

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն 2023-2024 ուսումնական տարվա նախնական ժամաբաժանումը (կցվում է):

Մ/Մ նախագահ՝ _____ Ռ. Շալունց

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ _____ Ս. Ավանեսյան

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**Առարկայական մեթոդական միավորման արձանագրությունների ամփոփման**

2022-2023 ուսումնական տարվա ընթացքում *Տարրական դասարանների մեթոդմիավորումը* գումարել է *11 հերթական նիստ* և *1 արտահերթ նիստ*, որոնց համար կազմվել է *12 արձանագրություն։*

*Տարրական դասարանների մեթոդմիավորման* նիստերի տվյալները՝ ստորև.

| № | ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԸ | ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ | ՔՆՆԱՐԿՎԱԾ ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՔԱՆԱԿԸ |
|---|---|---|---|
| 1 | 1 | 26.08.2022թ. | 5 |
| 2 | 2 | 19.09.2022թ. | 4 |
| 3 | 3 | 11.10.2022թ. | 8 |
| 4 | 4 | 11.11.2022թ. | 9 |
| 5 | 5 | 21.12.2022թ. | 11 |
| 6 | 6 | 10.01.2023թ. | 4 (արտահերթ) |
| 7 | 7 | 22.01.2023թ. | 3 |
| 8 | 8 | 20.02.2023թ. | 5 |
| 9 | 9 | 23.03.2023թ. | 7 |
| 10 | 10 | 20.04.2023թ. | 6 |
| 11 | 11 | 08.05.2023թ. | 9 |
| 12 | 12 | 16.06.2023թ. | 12 |

*Տարրական դասարանների մեթոդմիավորման* սույն արձանագրությունների մատյանը կազմված է *46* էջից։

Մ/Մ նախագահ՝ _____ Ռ. Շալունց

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ _____ Ս. Ավանեսյան

«16» հունիսի 2023թ.